

ԸՇ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ԸՇ ԳԱԱ պատվիրակությունը Չինաստանում մասնակցել է Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի համագումարին



ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատվիրակությունը ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանի գլխավորությամբ Չինաստանի Շանդունի նահանգի Ցզինան քաղաքում մասնակցել է Գիտությունների

րի ակադեմիաների միջազգային ասոցիացիայի գիտական խորհուրդների 2-րդ համագումարին: Այն անցկացվել է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակում:

Համագումարին բացման խոսքով ելույթ են ունեցել Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի նախագահ ակադեմիկոս Վլադիմիր Գուսակովը, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի փոխնախագահ ակադեմիկոս Սերգեյ Ալոշինը, Շանդունի նահանգի ղեկավարության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Գիտության և տեխնոլոգիայի նախարարության ներկայացուցիչներ:

ՀՀ ԳԱԱ պատվիրակության անդամները հանդես են եկել գիտական զեկուցումներով: Համագումարի լիագումար միստին ներկայացվել է Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի ազգային բնական ժառանգության գիտական խորհրդի համանախագահ, ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս- քարտուղար Ռուբեն Հարությունյանի, կենսաբանական գիտությունների թեկնածու Աննա Սարգսյանի և պրոֆեսոր Գալինա Հովհաննիսյանի «Ժամանակա-

կից գենետիկական կենսամարկերների կիրառումը շրջակա միջավայրի մոնիթորինգում» թեմայով զեկուցումը: Կլիմայի փոփոխության հարցերին նվիրված միստին ներկայացվել է ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանի, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտատարատրական կենտրոնի տնօրեն Ավետիս Ծատուրյանի և փոխտնօրեն Վիգեն Գոգինյանի «Կենսատեխնոլոգիաներ և կլիմայի փոփոխություն. ծանր մետաղների հեռացման հեռանկարները աղտոտված միջավայրերից» թեմայով զեկուցումը:

Հումանիտար և սոցիալական գիտությունների մվիրված միստին ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նյարդահոգեբանական լաբորատորիայի վարիչ, ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների միավորման նախագահ Սիրանուշ Հովհաննիսյանը ներկայացրել է տեսական բանականության խնդիրները քիչ ուսումնասիրված լեզուներում:

Երիտասարդ գիտնականների միստին Սիրանուշ Հովհաննիսյանը անդրադարձել է Հայաստանի երիտասարդ գիտնականների ներկայիս գործունեությանը, իսկ ՀՀ ԳԱԱ ԱՊՀ հարցերով փորձագետ Գևորգ Վարդանյանը՝ համատեղ դրամաշնորհների, վերապատրաստումների և միջազգային համագործակցության հեռանկարներին:

Ընդլայնվում է հայ-չինական գիտական համագործակցությունը երկրաշարժերի հետազոտությունների ոլորտում



Վերջերս ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը հյուրընկալեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉՀ) երկրաշարժերի վարչության գլխավոր տնօրեն Վանգ Կունի գլխավորած պատվիրակությանը: Պատվիրակությունը Հայաստան էր ժամանել՝ մասնակցելու ՀՀ ԳԱԱ Արմեն Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում հայ-չինական համագործակցության շրջանակում կառուցված սեյսմաերկրադինամիկական ցանցի և տվյալների հավաքագրման ու մշակման կենտրոնի բացման արարողությանը՝ ամրապնդելու համագործակցությունը և քննարկելու նոր ծրագրերի հեռանկարը:

ՉՀ երկրաշարժերի վարչության և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր՝ երկրաշարժերի հետազոտությունների ոլորտում համագործակցության ամրապնդման և զարգացման նպատակով:

ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սադյանը ՉՀ երկրաֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, Ասիական սեյսմաբանական հանձնաժողովի գլխավոր քարտուղար, դոկտոր պրոֆեսոր Լի Լին շնորհեց ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում՝ Հայաստանի տարածքում սեյսմակայանների տեղադրման, դրանց շահագործման և հետագա զարգացման գործում ունեցած մեծ ներդրման համար:

Պրոֆեսոր Լի Լին իր շնորհակալական խոսքում նշեց. «Պատվավոր դոկտորի կոչումը բարձր մակարդակ է ինձ համար և մեծ հպարտություն, այն ինձ քաջալերում է աշխատել և ավելի խոր համագործակցել»:

«Չինաստանի ղեկավարությունը բարձր է գնահատում իրականացված աշխատանքները, քանի որ երկրաշարժերի այս հետազոտությունը կարևոր է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության համար: Մենք ակնկալում ենք, որ մեր համագործակցությունը կշարունակվի և կբերի այնպիսի արդյունքներ, որ կկարողանանք կանխարգելել, հետազոտել, պայքարել երկրաշարժերի դեմ և պատրաստել մեր հասարակությանը», - ասաց ՉՀ

երկրաշարժերի վարչության գլխավոր տնօրեն Վանգ Կունը:

ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը կարևորեց հայ-չինական գիտական համագործակցությունը: «Մեր պետության, մեր ժողովրդի համար առանձնահատուկ կարևորության միջոցառում է: 1988 թ. Հայաստանում տեղի ունեցած ահավոր երկրաշարժը 20 հազարից ավելի մարդկային կյանք է խլել: Եվ հատկանշական է, որ այս նորաստեղծ հետազոտական և մոնիթորինգի սեյսմաբանական կենտրոնի գլխամասային կառույցը տեղակայված է հենց Գյումրիում, որն ավելի է տուժել երկրաշարժից:

Տեղեկատվության արագ արձագանքման, տեղափոխման գերժամանակակից սարքերով և վերլուծական կենտրոնով հագեցած այս համակարգը թույլ կտա լուծել երկրաֆիզիկայի, սեյսմաբանության և կիրառական երկրաշարժագիտության ոլորտներում բազմաթիվ գիտական և կիրառական խնդիրներ, իրականացնել երաշխիքային սեյսմակալում շինարարություն, ինչպես նաև նպաստել երկրաշարժերի կանխատեսման խնդիրների լուծմանը», - ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը: Նա երախտագիտություն հայտնեց ՉՀ կառավարությանը, Հայաս-



տանում ՉՀ ղեկավարությանը և գործընկերներին՝ Հայաստանին ցուցաբերած աջակցության համար:

ՀՀ ԳԱԱ Արմեն Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն Ջոն Կարապետյանը նշեց, որ համագործակցության շրջանակներում ստեղծված սեյսմաերկրադինամիկական ցանցը թույլ է տալիս գրանցել երկրաշարժերն ամբողջ աշխարհում:

Սեյսմաերկրադինամիկական ցանցի և տվյալների հավաքագրման ու մշակման կենտրոնի ստեղծմանը գործնական մասնակցություն ու աջակցություն են ցուցաբերել ՉՀ կառավարությունը, Հայաստանում ՉՀ ղեկավարությունը, ՉՀ երկրաշարժերի վարչությունը, ՉՀ երկրաշարժերի վարչության երկրաֆիզիկայի ինստիտուտը, ինչպես նաև ՀՀ կառավարությունը, ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



«Հայկական համադպրոցական գիտության փառատուն-2025»-ի հաղթող նախագծերի պարգևատրման արարողությունը

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Հայկական համադպրոցական գիտության փառատուն-2025»-ի հաղթող նախագծերի պարգևատրման արարողությունը:

«Հայկական համադպրոցական գիտության փառատուն-2025»-ի նպատակն է դպրոցահասակ երիտասարդների շրջանում գիտական հետազոտությունների նկատմամբ հետաքրքրության սերմանումը, խմբային աշխատանքի, նորարարական նախագծերի իրականացման և դրանց ներկայացման հնարավորությունների զարգացումը:

Փառատոնի հաղթող ճանաչվեցին 62 նախագծերի հեղինակ շուրջ 130 աշակերտներ:

«Նման միջոցառումները շատ կարևոր են և նպատակ ունեն գիտության բաղադրիչը ներդնելու դպրոցներում: Երեխաների մասնագիտական կողմնորոշումը պետք է դպրոցում տեղի ունենա: Պետք է դպրոցներում զարգացնել բնական գիտությունները: Այսօր մենք ապրում ենք գիտության, բարձր տեխնոլոգիաների դարաշրջանում, և հիմքը պետք է դրվի դպրոցներում: Գիտությունների ազգային ակադեմիայի ավելի քան երեք տասնյակ ինստիտուտները պատրաստ են աջակցելու նման նախաձեռնությունների զարգացմանը», - իր ողջույնի խոսքում ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը:

«Այս մրցանակները առաջին հերթին ձեր աշխատանքի արդյունքն են, և ուզում են անկեղծորեն շնորհավորել ձեզ դրա համար: Շատ կարևոր է, երբ մարդն աշխատում է և տեսնում է իր աշխատանքի արդյունքը: Ձեր դեպքում դա տեղի է ունեցել: Հուսով եմ, որ այս հաղթանակը ձեզ մոտիվացնելու և ոգևորելու է ձեր հետագա հաղթանակների ճանապարհին», - հաղթողներին շնորհավորեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նախարարը նշեց, որ «Հայկական համադպրոցական գիտության փառատուն»-ի շրջանակում ներկայացվող նախագծերի թիվը տարեցտարի ավելանում է: «Եթե 2021թ.-ին ընդամենը 38 նախագիծ ունեինք, ապա 2025 թ.-ի համար արդեն 91 տարբեր նախագիծ են ներկայացվել 5 տարբեր անվանակարգերում: Սա այն միջոցառումներից է, որ կրթության հանդեպ թերահավատությունն ունեցող մեր քաղաքացիներին, կարծում եմ, արժե անպայման ներկա լինել և տեսնել, թե իրականում մեր դպրոցներում ինչ աշխատանք է կատարվում: Գիտության փառատոնի հաղթողներն են, որ հետագայում հնարավորություն են ստանում մասնակցելու նաև միջազգային գիտական փառատոնների: Ես վստահ եմ, որ առաջիկա տարիներին մեր երեխաները նաև միջազգային գիտական փառատոններից են վերադառնալու մեծ հաջողություններով», - ասաց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը:



Ս/թ. հունիսի 17-ին ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում (ՖԿՊԻ) տեղի ունեցավ ինստիտուտի հիմնադրման 45-ամյակին նվիրված համաժողովի միջոցառում:

Ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը, ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ-ի տնօրեն Վահան Քոչարյանը, Իտալիայի միջուկային հետազոտությունների ինստիտուտ - Ֆրասկատիի ազգային լաբորատորիաների գիտական գծով փոխտնօրեն պրոֆեսոր Սուլթան Դաբազովը, ՌԴ գիտությունների ակադեմիայի Միկրոէլեկտրոնիկայի տեխնոլոգիական պրոբլեմների և հատուկ մաթրոնոմիայի նյութերի ինստիտուտի տնօրեն, ՌԴ ԳԱ թղթակից անդամ Դմիտրի Ռոշչուկինը, ՌԴ

ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը նշեց հիմնադրման 45-ամյակը

Տոնակի պոլիտեխնիկական համալսարանի պրոռեկտոր Ալեքսեյ Գոգոլը: Այնուհետև տեղի ունեցավ ՖԿՊԻ-ի վաստակաշատ գիտաշխատողների պարգևատրման արարողություն:

ՖԿՊԻ հոբելյանական միջոցառումների շրջանակում նախօրեին մեկնարկեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ալաիկ Մկրտչյանի անվան «Ծառագայթային ֆիզիկա և հարակից կիրառություններ» 4-րդ միջազգային գիտական դպրոցը, որին մասնակցում էին հայտնի գիտնականներ, երիտասարդ գիտաշխատողներ և ուսանողներ Անգլիայից, Իտալիայից, Հայաստանից, Մալազիայից, Շվեյցարիայից, Ռուսաստանից, Սաուդյան Արաբիայից: Դպրոցի աշխատանքները շարունակվեցին մինչև հունիսի 21-ը:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ալաիկ Մկրտչյանի և նրա սաների ջանքերով հիմնադրված ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտն այսօր ունի ձևավորված գիտական ավանդույթներ և կայացած գիտական դպրոց, 9 գիտական լաբորատորիա, շուրջ 200 աշխատակից, այդ թվում՝ 3 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 18 գիտության դոկտոր, 47 գիտության թեկնածու:

ՖԿՊԻ-ն հիմնադրվել է 1980 թ.՝ որպես Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների բաժին՝ ինստիտուտի կարգավիճակով, իսկ 1984 թ. ՀԽՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ վերանվանվել է Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ: Սկզբում գիտական հետազոտություն-

ները հիմնականում ուղղված էին զանազան ռեզոնանսային (Մյուսբաուերյան) սպեկտրասկոպիայի, ռենտգենյան ու օպտիկական փնջերի մոդուլացիոն սպեկտրասկոպիայի, բյուրեղների ածեցման և ակուստիկայի բնագավառներին, ինչպես նաև գիտատար սարքաշինությանը: Տարիների ընթացքում ինստիտուտն արագ զարգացել և ընդլայնել է գիտական ուղղությունները: 1980-ականների վերջերին և 90-ականներին կառուցվել է մոր մասնաշենքը: Բացվել են մոր լաբորատորիաներ: Այժմ ինստիտուտն իրականացնում է հիմնարար և կիրառական հետազոտություններ կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, ցածրջերմաստիճանային պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, մանո և մեզո համակարգերի ֆիզիկայի, ֆիզիկական բժշկության, այլընտրանքային էներգետիկայի և գիտատար սարքաշինության բնագավառներում: Պահպանվում և ընդլայնվում են ինստիտուտում ձևավորված գիտական դպրոցը և առկա գիտական ներուժը՝ համալրվելով երիտասարդ մասնագետներով:

Ինստիտուտում գործում է «Կոնդենսացված վիճակի ֆիզիկա» և «Կիսահաղորդչային ֆիզիկա» մասնագիտություններով թեկնածուական ու դոկտորական թեզերի պաշտպանության 053 մասնագիտական խորհուրդը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Բյուրականի աստղադիտարանի գիտական նոր արդյունքները



Բյուրականի աստղադիտարանում հաշվել են փորձնական մասնիկի «հարաբերական արագությունը» դիտորդի նկատմամբ կամայական պսևդո-Ռիմանյան տարածության համար, ինչը չլուծված խնդիր էր՝ սկսած 1915 թ.-ից:

ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի գլխավոր գիտաշխատող Գագիկ Տեր-Ղազարյանի հեղինակությամբ «Gravitation and Cosmology» ամսագրում տպագրվել է գիտական հոդված՝ «On the Kinetic Recession Velocities of Astronomical Objects» (G. Ter-Kazarian, Gravitation and Cosmology, 2022, Vol. 28, N 2), որում հեղինակը սահմանել և հաշվել է աստղագիտական մարմինների հեռանալու իրական «կինետիկ» արագությունը, ինչն այդ մարմինների «կարմիր շեղման» ցանկացած արժեքների դեպքում մշտապես մնում է փոքր «վակուումում լույսի տարածման» արագությունից: Նման պարագայում ֆիզիկայի «պատճառականության» հիմնարար սկզբունքն այլևս չի խախտվում: Նա հաշվել է նաև ֆիզիկական մեծ կարևորություն ունեցող մեկ այլ բնութագրիչ՝ Տիեզերքի ընդարձակման հետևանքով աստղագիտական մարմինների շարժման մեջ ներառվելու չափաբաժինը:

«Աստղագիտության համար հիմնարար վերոնշյալ խնդիրը ֆիզիկայում գոյություն ունեցող կորագիծ տարածություններում մարմինների «հարաբերական արա-

գությունը» հաշվելու ընդհանուր, առավել բարդ, «դասական» խնդիր միայն մասնավոր դեպքն է: Դա 1915թ.-ից մինչև օրս չլուծված կարևորագույն խնդիր էր մնում Այնշթայնի «Ընդհանուր հարաբերականության տեսության» մեջ: Խնդրի դժվարությունը պայմանավորված է նրանով, որ տարածության «կորություն» առկայությունը պարզապես անհնար է դարձնում մարմնի արագության վեկտորի, այսպես կոչված, «զուգահեռ տեղափոխությունը» այդ տարածության մեջ, առանց որի հնարավոր չէ հաշվել «հարաբերական արագությունը»: 2023 թ.-ին, հաղթահարելով նշված բարդությունը, լուծեցի այդ ընդհանուր խնդիրը կամայական Ռիմանյան տարածության համար»,- ասաց Գագիկ Տեր-Ղազարյանը:

Այս մասին նա գիտական մոր հոդված է տպագրել վերոնշյալ ամսագրում՝ «Coordinate-Independent Definition of Relative Velocity in Pseudo-Riemannian Space-Time: Implications for Special Cases» (G.Ter-Kazarian, Gravitation and Cosmology, 2023, Vol. 29, N 1): Հոդվածում հեղինակը կամայական պսևդո-Ռիմանյան տարածության համար սահմանել և հաշվել է փորձնական մասնիկի «հարաբերական արագությունը»

դիտորդի տեսագծի նկատմամբ ընդհանուր դեպքում: «Որպես դրա կիրառություն» այդ արագությունը հաշված է ֆիզիկական մի շարք կարևոր մասնակի դեպքերում՝ Միկրոկվանտ մետրիկայի համար, կամայական ստացիոնար մետրիկայի համար, երբ փորձնական մասնիկը և դիտորդը հանգստի վիճակում են, համասեռ գրավիտացիոն դաշտի դեպքում, պատվող կորոդինատական համակարգի համար, Շվարցշիլդի մետրիկայի համար, Կեռի տիպի մետրիկաների համար, Ռոբերտսոն-Ուոլկերի մետրիկայի համար»,- նշեց Գագիկ Տեր-Ղազարյանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Լույսի միջազգային օրը ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում

ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում նշվեց Լույսի միջազգային օրը, որին մասնակցեցին աշակերտներ, ուսանողներ, ուսուցիչներ, դասախոսներ, գիտաշխատողներ:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ գիտության հանրամատչելիացման և զարգացման ծրագրերի վարչության պետ, դոկտոր պրոֆեսոր Կամո Աթայանը: ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Վահան Քոչարյանը պատմեց ինստիտուտի մասին, ներկայացրեց վերջին տարիների գիտական ձեռքբերումները:

Միջոցառման մասնակիցները շրջայց կատարեցին ինստիտուտի լաբորատորիաներում, մասնակցեցին հետաքրքիր գիտափորձերի: Գիտաշխատողներ Սեյրան Հարությունյանը, Ռուզան Սուքիասյանը, Ռուբեն Ափրեյանը և Վարդան Մարգարյանը ցուցադրեցին գիտափորձեր՝ կապված լազերի ճառագայթման հաճախականության կրկնապատկման, միկրոմասնիկների վրա լազերի ճառագայթման ցրման միջոցով օդի աղտոտվածության աստիճանի որոշման հետ:

Պրոֆեսոր Հայկ Սարգսյանը հանդես եկավ «Մի իսլանդական սագայի, արեգակնային քարի և Զյուսիսատլանտ-



յան օվկիանոսում վիկինգների անհավատալի ճանապարհորդությունների մասին» զեկուցմամբ: ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի առաջատար գիտաշխատող Միքայել Խանբեկյանը ներկայացրեց «Լույս. լույսի աղբյուրներ» թեմայով զեկուցումը:

Անցկացվեց վիկտորինա «Լույսի ֆիզիկական հատկությունները» թեմայով: Վիկտորինայի ամենաակտիվ 10 մասնակիցները ստացան պատվոգրեր:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Ակադեմիկոս Ալեքսանդր Զուբարյանի նոր մրցանակը

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Գերգիլյան սրահում ս/թ. հունիսի 10-ին պարգևատրել է Ռուսաստանի Դաշնության գիտության և տեխնիկայի բնագավառներում պետական մրցանակների դափնեկիրներին:

2024 թ. հունվարի տար գործունեության մեջ ակնառու նվաճումների համար ՌԴ պետական մրցանակ է շնորհվել ՌԴ կրթության և գիտության նախարարության կողմից Հայաստանի խորհրդի նախագահ, ՌԴ ԳԱ համընդհանուր պատմության ինստիտուտի գիտական ղեկավար, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Ալեքսանդր Օհանի Զուբարյանին, ինչը մեծանուն գիտնականի երկրորդ պետական մրցանակն էր:

Ալեքսանդր Զուբարյանը միջազգային հարաբերությունների պատմության և 20-րդ դարի ռուս-եվրոպական հարաբերությունների մասնագետ է, ավելի քան 350 գիտական աշխատությունների հեղինակ, ռուսական պատմագրության մեջ եվրոպական գաղափարների ուսուցման սիրտն էր ուղղության հիմնադիրներից մեկը:


Հիշեցնենք, որ 2021 թվականին ակադեմիկոս Գերգիլյան արժանացել էր ՌԴ պետական բարձր պարգևի՝ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշանի և դարձել այդ շքանշանի 4 աստիճանների լրիվ ասպետ: Պատմագիտության բնագավառում ունեցած ծանրակշիռ վաստակի շնորհիվ մեր հայրենակիցն մեծ ճանաչման է արժանացել միջազգային գիտական լայն հանրության շրջաններում: Նա պարգևատրվել է Ֆրանսիայի բարձրագույն «Պատվո լեգիոն» շքանշանով:

Ակադեմիկոս Ա. Զուբարյանը 2000 թվականին ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս անդամ, 2009 թ. պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ ոսկե մեդալով:

Գիտաժողով Դոնի Ռոստովում

Ս/թ. հունիսի 4-ից 7-ը Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Հարավային գիտական կենտրոնում (Դոնի Ռոստով) տեղի ունեցավ «Հայրենական մեծ պատերազմը Ռուսաստանի հարավի ժողովուրդների պատմության և հիշողության մեջ. իրադարձություններ, մասնակիցներ, խորհրդանիշներ» խորագրով գիտական համաժողովը, որին մասնակցեցին Ռուսաստանի Դաշնության 30 գիտական կենտրոնների և 10 արտասահմանյան երկրների 200 գիտնականներ:

Լիագումար միտում զեկուցով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը («Հայ ազգային դիվիզիաները Հայրենական մեծ պատերազմում. Կովկասյան լեռներից մինչև Բեռլին»): Պրոֆեսոր Ա. Մելքոնյանը հանդիպեց նաև Հարավային դաշնային համալսարանի ուսանողների և դասախոսների հետ: Հայկական պատվիրակությունը այցելեց Ռուս-Հայկական բարեկամության թանգարան, Սուրբ Խաչ և Սուրբ Կարապետ հայկական եկեղեցիներ և Զալդիր հայկական գյուղ:



Լրացան 33 ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ, 33 ԳԱԱ թղթակից անդամ, 33 վաստակավոր ճարտարապետ, 33 պետական մրցանակի դափնեկիր, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Զասրաթյանի ծննդյան 90 և գիտական գործունեության 60-ամյա հոբելյանները:

Մ. Զասրաթյանը ծնվել է 1935 թ. հունիսի 20-ին Երևանում՝ անվանի պատմաբան-բանասեր, ԴԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Մորուս (Մարգար) Զասրաթյանի և վաստակավոր ուսուցչուհի Սիրանուշ Մարտիրոսյան-Զասրաթյանի ընտանիքում: 1952-ին Մ. Զասրաթյանը ընդունվում է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետության բաժանմունք, որն ավարտում է գերազանցությամբ 1958-ին:

1958-ին Մ. Զասրաթյանը՝ որպես ավագ ճարտարապետ, աշխատանքի է անցնում նորաբաց «Երևանմաշխագիծ» ինստիտուտի Գևորգ Թամանյանի արվեստանոցում: Նրա նախագծերով Երևանում կառուցվում են բնակելի և վարչական շենքեր, դպրոցներ: Եվ դժվար է ասել, թե ինչպես կոսասավորվեր Մ. Զասրաթյանի ստեղծագործական կյանքը, եթե նա շարունակեր նախագծող ճարտարապետի իր խոստումնալից գործունեությունը: Բավական է նշել, որ երիտասարդական կառույցների նախագծման համար 1970-ին երիտասարդ ճարտարապետն արժանացել է ԶԼԿԵՄ մրցանակի, իսկ տասնամյակներ անց՝ 2007-ին՝ 33 վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչման: Սակայն այլ էր երիտասարդ ճարտարապետի ուղին. նա պիտի դառնար արժանավոր հետմորդը Զասրաթյանների գիտական գերդաստանի, պիտի նվիրվեր գիտությանը՝ զնալով հոր՝ վաստակաշատ հայագետ, ԴԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Մորուս Զասրաթյանի հետքերով:

1964 թվականից Մ. Զասրաթյանի գործունեությունն անխզելիորեն կապվում է ԴԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հետ, նախ՝ որ-

Հայկական ճարտարապետագիտության պարրիառը. Մուրադ Հասրաթյան

պես կրտսեր գիտաշխատող, ապա՝ ինստիտուտի գիտքարտուղար, իսկ 1971-1976 թթ. զուգահեռաբար՝ նաև Արվեստի ինստիտուտում գործող Արվեստագիտության և ճարտարապետության գիտական աստիճանաշնորհման խորհրդի գիտքարտուղար: 1979 թ. Մ. Զասրաթյանը նշանակվում է ինստիտուտի Պատմության և մշակույթի հուշարձանների համահավաքի նորաստեղծ բաժնի վարիչ՝ այդ պաշտոնում աշխատելով մինչև 1985 թ.: 1988 թ. ապրիլի 15-ից մինչ օրս Մ. Զասրաթյանը 33 ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչն է:

1969 թ. Մ. Զասրաթյանը պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Սյունիքի XVII-XVIII դդ. ճարտարապետական համալիրները» թեմայով, իսկ 1993-ին՝ դոկտորական ատենախոսությունը՝ «Հայաստանի XV-XIX դդ. սկզբի ճարտարապետությունը» թեմայով: 2003-ին նրան շնորհվում է պրոֆեսորի գիտական կոչում: 2006-ին Մ. Զասրաթյանը ընտրվում է 33 ԳԱԱ թղթակից անդամ: Մ. Զասրաթյանը հեղինակ է շուրջ երկու տասնյակ գրքերի, բազմաթիվ գրքույկների, հարյուրավոր հոդվածների, թեզիսների, գրախոսությունների և համրագիտարանային հոդվածների, որոնք լույս են տեսել Հայաստանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, Ճապոնիայում, Կանադայում, Թուրքիայում և այլ երկրներում:

Մ. Զասրաթյանի առաջին գիրքը՝ նվիրված ծննդավայր Երևանի ճարտարապետությանը, լույս տեսավ Մոսկվայում 1968-ին՝ քաղաքի հիմնադրման 2750-ամյակի օրերին՝ Վարազդատ Դարությունյանի և Արսեն Մելիքյանի համահեղինակությամբ: Հեղինակային նույն կազմը ԽՍՀՄ կազմավորման 50-ամյակի կապակցությամբ 1972-ին Մոսկվայում հրատարակում է «Архитектура Советской Армении» աշխատությունը:

Նա ճարտարապետության այն եզակի պատմաբանն է, որն ուսումնասիրել և հրատարակել է հայ ճարտարապետության ամբողջական պատմությունը՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը, ընդ որում ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն ու ֆրանսերեն՝ օտարալեզու ընթերցողի համար: 1985-ին Մոսկվայում լույս տեսած «Ալեքանդր հայ ճարտարապետության» (ռուսերեն և ֆրանսերեն) մենագրության մեջ առաջին անգամ ներկայացրեց հայ ճարտարապետության անցած ուղին իր սկզբնավորումից մինչև 20-րդ դարը, իսկ 2010-ին Լիոնում ֆրանսերենով հրատարակվեց «Հայ ճարտարապետության պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» աշխատությունը: «Հայ արվեստի պատմություն» հիմնարար աշխատության համար, որտեղ Մ. Զասրաթյանը հեղինակել է հայ ճարտարապետության պատմությանը նվիրված բաժինները, նա կերպարվեստի ոլորտում արժանացել

է 2009 թ. 33 պետական մրցանակի: Մ. Զասրաթյանը գրել է նաև «Հայոց պատմության» քառահատորյակի՝ հայկական ճարտարապետությանը վերաբերող բոլոր հոդվածները:

Ծանրակշիռ է Մ. Զասրաթյանի ներդրումը մասնավորապես ուշ միջնադարի (XV-XVIII դդ.) հայ ճարտարապետության ուսումնասիրության գործում: Մինչև նրա աշխատությունների լույսընծայումը, հայ ճարտարապետության պատմության մեջ հայկական ուշմիջնադարյան (XVII-XVIII դդ.) հուշարձանները սակավ էին շրջանառվում: Նա առաջինն է լայնամասշտաբ և համակողմանիորեն հետազոտել այդ շրջանի ճարտարապետությունը: 1973-ին լույս է ընծայվել «Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները» աշխատությունը, որտեղ հեղինակն առաջին անգամ ուսումնասիրել և չափազրել է ուշ միջնադարի ուշագրավ հուշարձանները՝ Տաթևի Մեծ անապատի, Շատին վանքի, Զալիժորի, Մեղրու բերդերի և այլ համալիրներ:

Մ. Զասրաթյանն ուսումնասիրել և չափազրել է հայկական գաղթօջախների հուշարձանները, մասնավորապես Թիֆլիսի 24 հայկական եկեղեցիները, և ուսումնասիրության արդյունքները հրատարակել ռուսերեն ու ֆրանսերեն:

Գիտնականի հետաքրքրությունների մեջ էր նաև Արցախի ճարտարապետությունը: 1964-ին նա առաջին անգամ այցելում է Ղարաբաղ՝ դառնալով Արցախի ճարտարապետության առաջին հայ պատմաբանը: Նա առաջինն է չափազրում Լեռնային Ղարաբաղի տարածքի հայկական միջնադարյան ճարտարապետության արժեքավոր հուշարձանախմբերը՝ Ամարասի վանքը, Դադիվանքը, Խաթրավանքը, Գանձասարի համալիրը, Գոչավանքը, բազմաթիվ եկեղեցիներ, այդ թվում՝ Շուշիի նշանավոր Ղազանչեցոց տաճարը: Հետագայում իր ուսումնասիրությունները հրատարակում է տարբեր լեզուներով՝ առանձին գրքույկների և հոդվածների տեսքով: Այդ տևական ուսումնասիրությունների համրագումարը դարձավ «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոց» մենագրությունը (1992): Պատմական Հայաստանի Արցախ նահանգի ճարտարապետության ձևավորման և զարգացման պատմությանը նվիրված այս աշխատության մեջ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է երկրամասի XII-XIII դդ. շինարարական արվեստը, հիմնավորված է այդ ժամանակաշրջանում արցախյան ճարտարապետական դպրոցի առանձին գոյությունը, վեր հանում նրա առանձնահատկությունները: Քաղաքական նշանակություն ունեցող այս կարևոր աշխատության մեջ Մ. Զասրաթյանը գիտական փաստարկներով հակահարված տվեց ադրբեջանցի կեղծարարներին, որոնք ջանում էին

արցախյան ճարտարապետությունն օտարել հայ մշակույթից, ապացուցեց, որ դրանք ոչ թե «ալբանական» են, այլ՝ զուտ հայկական: Խնդիր, որն արդիական է նաև այսօր:

Նախիջևանում Մ. Զասրաթյանը չափազրել, վերլուծել և գիտական շրջանառության մեջ է դրել բազմաթիվ հուշարձաններ, որոնց թվում Աստապատի Կարմիր վանքը, որը դրանից ոչ շատ ժամանակ անց քանդվեց և այժմ իր գոյությունը շարունակում է Մ. Զասրաթյանի չափագրություններում ու նկարագրություններում: Նա ուսումնասիրել է նաև Ագուլիսի ճարտարապետական հուշարձանները և վերջին հայ գիտնականն է (գուցե վերջին հայը), որը եղել է Ջուղայի գերեզմանատանը: Հետագայում նա ուսումնասիրություն հրատարակեց Ջուղայի խաչքարային դպրոցի առանձնահատկությունների մասին:

2000 թ. Մոսկվայում լույս է տեսնում Մ. Զասրաթյանի «Армянская архитектура раннего христианства» հիմնարար աշխատությունը (ռուսերեն և անգլերեն)՝ հարուստ փաստական նյութով, բոլոր հուշարձանների լուսանկարներով և գծագրերով: Հետագայում Մ. Զասրաթյանը գիրքը թարգմանում է հայերեն և հրատարակում Մոսկվայում: Նրա խմբագրությամբ և անմիջական ջանքերի շնորհիվ լույս են տեսել «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյակի երկրորդ (2002) և երրորդ (2004) հատորները:

Անվանի գիտնականը զբաղվել է այնպիսի նշանակալից և քիչ ուսումնասիրված բնագավառով, ինչպիսին ճարտարապետական առնչությունների հիմնահարցն է: Նա ուսումնասիրել է հայ-բյուզանդական, հայ-սիրիական, հայ-իրանական, հայ-վրացական ճարտարապետական կապերը և դրանց արդյունքները հրապարակել ու ներկայացրել գիտաժողովներում:

Նշանակալի է Մ. Զասրաթյանի ավանդը հայ արվեստին նվիրված միջազգային գիտաժողովների կազմակերպման գործում: Մ. Զասրաթյանը հայկական ճարտարապետությունը ներկայացրել է միջազգային բազմաթիվ գիտաժողովներում, աշխարհի տարբեր երկրներում:

2010-ին Մ. Զասրաթյանն արժանացել է 33 ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակին:

Շնորհավորելով ականավոր գիտնականին իր լուսավոր հոբելյանի առթիվ՝ մաղթենք նրա առողջություն, կենսական անսպառ կրոնով, գիտատեղծագործական մոր նվաճումներ՝ ի նպաստ հայկական ճարտարապետության պատմագիտական մտքի զարգացման, ի շահ հայագիտության առաջընթացի:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ
33 ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն



Ս/թ. հունիսի 26-ին 33 գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Հայ արվեստը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945)» թեմայով գիտաժողովը՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած փառապանծ հաղթանակի 80-ամյա հոբելյանին: Գիտաժողովը կազմակերպել էին 33 ԳԱԱ արվեստի ինստիտուտը և Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնը (Ռոսսոտրուդնիչեստվոյի ներկայացուցչությունը Հայաստանում):

Գիտաժողովի նպատակն էր ներկայացնել Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ արվեստի ընդհանուր համայնապատկերը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց 33 ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 33 ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: Նա շեշտեց գիտության և գիտնականների նշանակալի դերը Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի մեջ: «Մեծ հայրենականի տարիներին հայ

«Հայ արվեստը Հայրենական մեծ պատերազմի տարիներին»

ժողովուրդը ոչ միայն պատերազմի դաշտում, այլև թիկունքում՝ գիտության և տնտեսության մեջ, նշանակալի ներդրում է ունեցել, ինչն իր հերթին մեծ դեր է խաղացել հաղթանակի հասնելու գործում: Հայաստանի տնտեսությունը և փոխադրվել է ռազմական ռելսերի վրա: Այստեղ մեծ է եղել մեր գիտնականների դերը: Օրինակ, անվանի հայ աստղագետ Վիկտոր Համբարձումյանն առաջարկել է պոլոսի միջավայրերում լույսի ցրման մոր տեսությունը, որի շնորհիվ հնարավոր է եղել հայտնաբերել և խոցել ստորջրյա օբյեկտները: Անշուշտ, մեծ է եղել նաև արվեստագետների, գրողների դերը»,- ասաց Յուրի Սուվարյանը:

«Թևավոր խոսք կա՝ երբ որոտում են թնդանոթները, մուսաները լռում են: Արդյո՞ք այդպես էր Հայրենական մեծ պատերազմի ժամանակ: Կարծում եմ՝ ոչ: Ընդհակառակը, արվեստը, մասնավորապես երաժշտությունը, օգնել է մարդկանց ոչ միայն ռազմաճակատում, այլև թիկունքում: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ՝ 1943 թվականի նոյեմբերի 10-ին, հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Մի քանի ամիս անց՝ 1944 թվականի գարնանը, Հայաստանի գիտությունների ակադեմիայի համակարգում կազմակերպվեց երաժշտության պատմության և տեսության սեկտորը, որի հիման վրա 1948 թվականին ստեղծվեց Արվեստների պատմության և տեսության բաժինը, որը հիմք հանդիսացավ 1958 թվականին Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի ստեղծման համար: Այսպիսով, հայ ակադեմիական արվեստագիտությունը ծնվեց հենց Հայրենական մեծ պատերազմի տարիներին, այդ դժվար տարիներին ստեղծվեցին հայ արվեստի գլուխգործոցները»,- իր խոսքում ասաց 33 ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, 33

արվեստի վաստակավոր գործիչ ԱՆՆԱ Ասատրյանը:

Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվոյի» ներկայացուցչության ղեկավար Վադիմ Ֆեֆիլովը նշեց՝ գիտաժողովը հիշողության, հարգանքի և երախտագիտության դրսևորում է: «Մենք հավաքվել ենք այստեղ՝ հասկանալու և քննարկելու արվեստի կարևոր դերն ամենադժվարին փորձությունների տարիներին: Երբ ազգերը պայքարում էին գոյատևման համար, հենց մշակույթն էր, հենց արվեստն էր, որ դարձավ հոգևոր ուժի աղբյուր: Նկարիչներ, կոմպոզիտորներ, գրողներ, ճարտարապետներ. նրանք շարունակեցին ստեղծագործել, ոգեշնչել, աջակցել ժողովրդի մարտական ոգուն և ամրապնդել նրանց հավատը հաղթանակի նկատմամբ: Հայ մշակույթային գործիչներ և և ամենաս չննացին: Նրանց աշխատանքները հեռարձակվում էին ռադիոյով, հրատարակվում ամսագրերում, ցուցադրվում թանգարաններում և նույնիսկ խրամատներում: Նրանք ստեղծեցին ոչ միայն արվեստ, այլև պատմություն՝ կենդանի, իրական, լի ցավով և քաջությամբ»,- ասաց Վադիմ Ֆեֆիլովը:

Գիտաժողովի ժամանակ գեկուցումներով հանդես եկան 33 ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատողները՝ բացահայտելով Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ երաժշտության, կերպարվեստի, թատրոնի և կինոյի, ճարտարապետության և գրականության զարգացման հիմնական միտումները, անդրադառնալով հայ արվեստի անվանի գործիչների այդ տարիների ստեղծագործություններին:

33 ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



Ս/ք. մայիսի 27-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության անդամները ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրեցին քաղաքական գիտությունների թեկնածու Եմիլ Օրդուխանյանը:

Եմիլ Օրդուխանյանը ծնվել է 1985 թ. հունվարի 20-ին Երևանում: 2001-2006 թթ. սովորել է Երևանի Վալերի Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի (այժմ՝ Բրյուսովի անվան պետական համալսարան) օտար լեզուների, ապա լեզվաբանության հաղորդակցության ֆակուլտետներում ֆրանսերեն լեզու և քաղաքագիտություն մասնագիտություններով: Այնուհետև նույն համալսարանի ասպիրանտուրայում՝ «Ռոմանական լեզուներ» ֆրանսերեն» մաս-

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Եմիլ Օրդուխանյանը

մագիտությամբ: Ձուգահեռ եղել է հայցորդ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում՝ «Քաղաքագիտություն» ԻԳ.00.02 Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ: 2009 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթի վերլուծություն (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով և ստացել է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2009-2014 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում՝ որպես գիտական քարտուղար՝ 2010-2011 թթ. լինելով նաև ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՒՀ-ի 062 «Սոցիոլոգիա և քաղաքագիտություն» մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար: 2014 թ.-ից եղել է ինստիտուտի քաղաքագիտության բաժնի ավագ գիտաշխատող, իսկ 2022 թ.-ից՝ ինստիտուտի տնօրենն է:

Եմիլ Օրդուխանյանը 9 մեծագործության (6-ը՝ համահեղինակությամբ), 1 բառարանի, 2 ուսումնամեթոդական ձեռնարկի (1-ը՝ համահեղինակությամբ), ավելի քան 50 գիտական հոդվածների հեղինակ է, որոնք հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և լեհերեն լեզուներով տպագրվել են ՀՀ և արտասահմանյան գիտական հանդեսներում և պարբերականներում (որոնցից 8-ը՝ ՄԳՀ-ում՝ որպես առաջին հեղինակ):

2016 թ. ՀՀ ԲՈՒՀ-ի կողմից ստացել է դոցենտի գիտական կոչում՝ «Քաղաքագի-

տություն» մասնագիտությամբ: 2007 թ.-ից դասավանդել է Երևանի Վալերի Բրյուսովի անվան լեզվաբանական գիտական համալսարանի ֆրանսերենի ամբիոնում, 2012 թ.-ից նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և քաղաքագիտության ամբիոնում, 2023 թ.-ից՝ քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնում: 2012-2022 թթ. դասավանդել է Միջազգային միաբանության երևանյան կրթահամալիրում, 2009-2013, 2015-2016 թթ.-ին՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի քաղաքագիտության և իրավունքի պատմության, ապա սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոններում: 2019 թ.-ից Եմիլ Օրդուխանյանը Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի ողջնա է, սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ: 2012-2020թթ.-ին նա դասախոսել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, 2012-2022 թթ.-ին՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում՝ քաղաքագիտության, ապա միջազգային հարաբերությունների ամբիոններում:

Եմիլ Օրդուխանյանը 2015 թ.-ից ամերիկյան MPSA (Midwest Political Science Association) քաղաքագիտական ասոցիացիայի անդամ է, 2016-2021 թթ. եղել է Միջազգային քաղաքագիտական ասոցիացիայի (IPSA) անդամ: 2017 թ.-ից Եվրոպական քաղաքագիտական կրթության ցանցի

փորձագետ է, Քաղաքագիտական կրթության արևելաեվրոպական ցանցի անդամ:

2022 թ.-ին նա ընտրվել է Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոմիտեի անդամ: 2023 թ.-ից «The Politonomos: Journal of Political and Legal Studies» ակադեմիական անգլիալեզու գիտական հանդեսի գլխավոր խմբագիրն է:

Եմիլ Օրդուխանյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի զարգացման ծրագիրը: Նախատեսվում է աջակցման և խրախուսման մեխանիզմների ներդրում ՄԳՀ-ում ներառված հանդեսներում տպագրությունների համար (WOS և Scopus), օժանդակման մեխանիզմների մշակում միջազգային գիտաժողովներին մասնակցության համար, արտասահմանում գործող հայազգի հասարակագետների տվյալների շտեմարանի կազմում, միջազգային անհատական և միջինաստիտուցիոնալ համագործակցության ընդլայնում, հայազգի պրոֆիլային գիտնականների հետ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացում: Նրա խոսքով՝ կարևոր են Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդումը, Սփյուռքի գիտական ներուժի բացահայտումն ու ներգրավումը՝ որպես ռազմավարական անհրաժեշտություն: Նախատեսվում է ինստիտուտի ենթակառուցվածքային արդիականացում, նաև բրենդավորում ինստիտուտի ձեռքբերումները համայնացնելու, համայնի ճանաչելիությունն ու գովառությունը բարձրացնելու նպատակով:



Ս/ք. մայիսի 27-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության անդամները ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրեցին ֆիզիկամաթեմա-

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Պավել Մուժիկյանը

տիկական գիտությունների թեկնածու Պավել Մուժիկյանին:

Պավել Մուժիկյանը 2002-2006 թթ.-ին սովորել է Երևանի պետական համալսարանում՝ ռադիոֆիզիկա մասնագիտությամբ, այնուհետև նույն համալսարանի մագիստրատուրայում՝ կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա մասնագիտությամբ: 2011թ.-ին ավարտել է ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի ասպիրանտուրան և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պավել Մուժիկյանը 2007 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում՝ լաբորանտից մինչև ավագ գիտաշխատող, գիտական քարտուղար և փոխտնօրեն: Իսկ 2024 թ.-ի դեկտեմբերից ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարն էր: Պավել Մուժիկյանը 33 գիտական հոդվա-

ծի և 1 արտոնագրի հեղինակ է: Նա դասախոսում է Հայ-ռուսական համալսարանում:

Պավել Մուժիկյանը նշեց, որ ինստիտուտի առաջնահերթություններից են ինստիտուտի գիտական ուղղությունների պարբերական գնահատումը, արդիական, կիրառական ուղղվածությամբ գիտական հետազոտությունների և մշակումների զարգացումը, ինստիտուտի կառուցվածքի պարբերական վերանայումը, ինստիտուտի գիտական և ճարտարագիտական անձնակազմի երիտասարդացումը, միջին տարիքի գիտնականների կայուն սերնդի ձևավորումը, համագործակցությունը ՀՀ գիտական և կրթական կազմակերպությունների հետ, գիտության համայնացումը, միջազգային համագործակցության ընդլայնումն ու խորացումը, կիրառական ու նորարարական բնույթի գիտահետազոտական աշխատանքների ու գիտատեխնոլոգիա-

կան մշակումների խթանումը:

Պավել Մուժիկյանը նշեց, որ 2025 թ.-ին ինստիտուտում կազմավորվել է տեխնոլոգիական և նորարարական մշակումների աջակցության բաժին, որը կզբաղվի ինստիտուտի տեխնոլոգիական մշակումների, դրանց հնարավոր լիցենզավորման և փոքրածավալ սեփական արտադրության, ինչպես նաև արդյունաբերական ձեռնարկությունների համար պայմանագրային հետազոտությունների ու մշակումների իրականացման հարցերով: Ինստիտուտի գործունեության կարևոր բաղադրիչներ են լինելու նաև պաշտպանական համակարգի համար աշխատանքների իրականացումը, պետական պատվերի ձևավորմանը և կատարմանը մասնակցությունը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

«Հայոց ապագա գրության թանգարանի գորգերի ընտրանի» գրքի շնորհանդեսը

Ս/ք. հունիսի 17-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Հայոց ապագա գրության թանգարանի գորգերի ընտրանի» գրքի շնորհանդեսը: Այս եզակի աշխատությունը հրատարակվել է «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի և «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ-ի կողմից: Գրքի հեղինակներն են «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն պ.գ.թ. Կարեն Փափկանյանը, ՊՈԱԿ-ի փոխտնօրեն և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող պ.գ.թ. Սվետլանա Պողոսյանն ու ՊՈԱԿ-ի գիտաշխատող պ.գ.թ. Աշխուհ Պողոսյանը:

«Այս գիրքը նոր խոսք է հայագիտության, մշակութաբանության, արվեստաբանության բնագավառներում: Այստեղ ներկայացված է 47 տարիների եր-

կար աշխատանքը, որի ընթացքում մեր բազմաթիվ նվիրյալների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի ամենատարբեր անկյուններից հավաքվել և մեկտեղվել են շուրջ 2200 քանդաքանանյան առարկաներ, գորգեր, և դրանցից ընտրված շուրջ 300 նմուշ ներկայացված են այս քառալեզու գրքում՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն և թուրքերեն: Գիտահեռ ներկայացված են հայկական գորգերը՝ խմբերով, դասակարգված ըստ աշխարհագրության, ժամանակագրության, տեխնոլոգիաների»,- ասաց Կարեն Փափկանյանը:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի վերլուծաբան Գոռ Մարգարյանը նշեց, որ հայկական գորգերն իրենց որակով և գեղագիտական յուրահատկությամբ վաղուց են արժանացել ճանաչման՝ սկսած արաբ պատմիչներից մինչև ուշ միջնադարի ու նոր շրջանի եվրոպական, ռուսական և այլ աղբյուրներ: «Գորգագործությունն ուղղակի նյութական հնարավորությունների արդյունք չէ, այլ մշակութային ինքնության,

ավանդույթի, կաղապարների, պատկերային և խորհրդանշական համակարգի դրսևորում: Եվ հենց այդ պատճառով է կարևոր գիտակցել ոչ միայն հայկական գորգագործության ուսումնասիրության, այլև դրա հանրահռչակման առաջնահերթությունը: Եվ նման աշխատությունները ոչ միայն ճանաչելի են դարձնում հայկական բազմալեզու լսարանի համար, այլև թույլ են տալիս հստակ տարբերակել և, վիզուալ արձանագրելով դրա հայկականությունը, տուրք չտալ աղավաղումների ու յուրացումների օտար փորձերին»,- ասաց Գոռ Մարգարյանը:

Աշխուհ Պողոսյանը նշեց, որ գորգերի հավաքածուի ստեղծման նպատակն է Հայաստանում ունենալ գորգի թանգարան Վաղարշապատում և ենթաձևերի իջևանում, Բերդում, Գորիսում, Կապանում, Սիսիանում: «Պետք է հասնել նրան, որ ունենանք գորգագործական մշակույթի գիտահետազոտական կենտրոն: Դա պետք է կազմակերպված լինի պետականորեն»,- նշեց Աշխուհ Պողոսյանը:



ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Պավել Ավետիսյանը շեշտեց աշխատության մշակութային արժեքները և հանրահռչակման տեսանկյունից:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

ՄՏՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ

Չպետք է երկիրը վերածել փորձադաշտի

Այսօր մեր ժողովուրդը թևակոխել է իր պատմության թերևս ոչ դյուրին, բազում հարցականներով լի մի բարդ ժամանակաշրջան: Համրությանը շարունակ պարտադրվում են գաղափարական հմարովի «նոր մոդելներ», որոնք արմատապես խաթարում են դրերի ընթացքում ձևավորված մեր ազգային արժեհամակարգը: Ամեն ինչ արվում է՝ արժեզրկելու հայրենիք, պատմական հիշողություն, հայոց ցեղասպանություն, Սփյուռք, եկեղեցի հասկացությունները, այն ամենը, ինչ կապվում է ազգային ինքնության և նկարագրի հետ:

Վերջին շրջանում համացանցում շրջանառվող և ամենաբարձր օղակներից մատուցվող հայոցախառն ու ցինիկ բառամթերքը, սաղմոսներից պատեհ-անպատեհ կատարվող մեջբերումները, օրեցօր ծնվող արհեստածին, հակասական ու դատարկ մտքերի անվերջանալի խառնաշփոթը, կեղծիքն ու սուտը հոգնեցրել ու զգվեցրել են մեր հասարակության լայն խավերին, իսկ մի որոշ հատվածին էլ՝ վերջնականապես մոլորեցրել ու բթացրել: Տեղին է հիշատակել ԱՄՆ նախկին նախագահ Աբրահամ Լինքոլնի համրահայտ միտքը. «Կարելի է հիմարացնել ժողովրդի մի մասին մշտապես, կարելի է հիմարացնել ամբողջ ժողովրդին մի որոշ ժամանակ, սակայն ամենար է հիմարացնել ամբողջ ժողովրդին մշտապես»:

Հանրային կյանքում շարունակ կեղծ օրակարգեր ներդնելով՝ իրենց անադելվատ պահվածքով ու խոսույթով իշխանությունները նպատակամետ ուղղորդում են հասարակական անհամերաշխության ու երկպառակության խորացումը:

Երբ երկրիդ սպառնում են լրջագույն մարտահրավերները, երբ միտքդ ու հոգիդ չեն կարողանում մարսել ահռելի կորուստների դաժան ցավը, իրավունք չունես երկիրդ դարձնելու սին գաղափարների իրականացման փորձադաշտ: Չկա մի բնագավառ, որտեղ հասած չլինեն մարտնչող տգիտության շոշափուկները, չկան ազգային և պատմական արժեքներ, որոնք ենթարկված չլինեն բովանդակային նեմզավոխման և արժեզրկման:

Իմաստուն փրկչի դերը կամովին ստանձնած իշխանությունների կարծիքով մինչև 2018 թվականը ինչ եղել է, սխալ է եղել, չի եղել մեր ինքնիշխան երկիրը, չենք ունեցել մարտունակ բանակ, հզոր գիտություն, մշակույթ, կրթություն, մենք ճիշտ չենք ապրել, մտածել, աշխատել: Ահավասիկ մտքի վերջին ցցուն փայլատակումը. «Մենք ոչ թե կորցրել ենք Լեռնային Ղարաբաղը, մենք գտել ենք Հայաստանի Հանրապետությունը»: Մեր երկիրը չգիտես թե որտեղից նորեն «գտնողների» այս բառախաղը և նմանատիպ բազում անհեթեթ արտահայտություններն ու կարգախոսները ոչ այլ ինչ են, եթե ոչ լրջախոհության ահռելի պակասի ու տգիտության ավելցուկի վկայություն: Դիպուկ է ասել Ֆրանսիայի նախկին նախագահ Շարլ դը Գոլը. «Չի կարելի թույլ տալ, որ ցածր զարգացում ունեցող մարդիկ կառավարեն երկիրը, որովհետև նրանք երկիրը կհասցնեն իրենց մակարդակին»:

Իշխանությունների որդեգրած ապաշնորհ (կամ, որ ավելի մոտ է իրականությանը՝ հատուկ ծրագրված) քաղաքական կուրսը լուրջ հետևանքներ կարող է ունենալ «իրական» Հայաստանի սուվերենության և ինքնիշխանության համար:

Խմբագրություն

Քաղաքացիական երկպառակության մթնոլորտ ստեղծելը քաղաքական խաղադրույք է

Հայաստանի պատմության ընթացքում եղել են ժամանակներ, երբ աշխարհիկ իշխանությունները՝ թագավորներ, իշխաններ կամ կառավարիչներ, փորձել են թուլացնել կամ հպատակեցնել Հայ առաքելական եկեղեցին (ՀԱԵ): Այս փորձերը սովորաբար տեղի են ունեցել ազգային ճգնաժամերի այնպիսի պահերին, երբ օրվա կառավարիչները, կորցնելով իրենց լեգիտիմության հիմքերը, ակամատես են եղել ՀԱԵ-ի նկատմամբ ժողովրդի վստահության և հավատի աճին: Դեռևս քաղաքացիական պատմության ընթացքում հայտնի ճնշումները պայմանավորված են եղել ոչ թե զուտ կառավարման նկատառումներով, այլ ժողովրդի հոգևոր անկախությունից բխող վախով:



Այսօրվա ճնշումները քաղաքական վախերի հետևանք են: Նիկոլ Փաշինյանը պարզապես հակաեկեղեցական հռետորաբանությամբ քաղաքական գործիչ չէ: Նա լեգիտիմության բռնազավթող է՝ ուզուրպատոր, ով, կորցնելով հանրության ու ժողովրդի հավատն ու վստահությունը, թշնամիներ է փնտրում ազգի ներսում՝ ժողովրդական վրդովմունքը վերափոխելու հստակ մտադրությամբ:

Փաշինյանը չի կարողանում առաջնորդել հասարակությանը համերաշխությամբ մթնոլորտում, ուստի առաջնորդում է՝ անկարգություններ սերմանելով: Նա չունի ստեղծարար կարողություններ՝ երկրի ինստիտուտներն ամրապնդելու կամ ազգը միավորելու համար, ուստի զբաղվում է դրանց քայքայմամբ: Նա ազգային առաջնորդի կերպարով հանդես գալու ներուժ չունի և այս բացը լրացնելու համար թիրախավորում է ազգային խորհրդանիշները, այդ թվում՝ նաև Հայ առաքելական եկեղեցին:

Հայ առաքելական եկեղեցին սոսկ հոգևոր հաստատություն չէ:

Այն ազգային ինքնության վերջին ամրոցն է՝ այն ժայռը, որին կարող է հենվել ժողովրդի՝ կողմնորոշումը կորցրած կամ լուսավոր ճամփա գտնելու դժվարության մեջ հայտնված հատվածը: Հարվածներ հասցնելով ՀԱԵ-ին՝ Փաշինյանը փորձում է, վտանգավոր խաղ խաղալով, վաբանկ գնալ՝ ոչ միայն կառավարման համակարգի ծախսողուններն արդարացնելու, այլև հանրության մոտ սրբության, պատմական ժառանգության և շարունակականության գաղափարները ջնջելու նպատակով:

ՀԱԵ-ի դեմ այս հարձակումների հիմնական տրամաբանությունը քաղաքացիական հակասություններ և ընդհարումներ հրահրելն է:

Գարեգին Բ կաթողիկոսի դեմ սանձազերծված վարկաբեկման արշավները ոչ թե պատահականություն են, այլ դիտավորյալ և համակարգված քայլեր՝ ազգային միասնականության մնացորդները քայքայելու, հանրության բեռնացումը խորացնելու և քառասյին իրավիճակ ստեղծելու համար: Դա մի քաղաքական սցենար է, որի վերջնամպատակն է վերջո հայտարարելն է. «Ես եմ այն միակը, ով կարող է լուծել այս քաոսը»:

Քաղաքացիական երկպառակության մթնոլորտ ստեղծելը, ըստ էության, այն մարդու վերջին քաղաքական խաղադրույքն է, ով չունի ոչ հեղինակություն, ոչ աջակցություն, ոչ էլ ապագայի հստակ տեսլական:

Դավիթ ԱՆԱՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

168.am, 10.06.2025 թ.

«Լայոց Տուն» համահայկական միավորումը կոչ է արել անհապաղ դադարեցնել ոտնչությունները Լայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նկատմամբ

Սիրելի՛ հայրենակիցներ, երկրի առջև ծառացած խիստ մտահոգիչ մարտահրավերների հաղթահարման միակ խելամիտ ճանապարհը ողջախոհության և օրինապաշտության հենքով եղած ուժերի համախմբումն ու անձնագոհության գնով տոկալն ու դիմակայելն է՝ մեր ժողովրդին հույս, հավատ ու սեր ներշնչելով: Մեր ժողովուրդը բազմիցս է աներկբա ապացուցել, որ պարտվող տեսակ չէ, ունակ է չտրվելու սաղմոսների և սթափ ու պատվով դուրս գալու է՛լ ավելի բարդագույն, ծանր իրավիճակներից, ինչի գրավականը եղել և մնում է Հայ ժողովրդի հավատքը և ազգային ինքնության ամբողջական արժեհամակարգը:

Եվ այս խիստ վտանգավոր շրջափուլում, երբ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես սահմանադրական կարգի հիմունքների հիմնարար կառուցակարգ, օժտված լինելով ոչ միայն Ազգային Եկեղեցու սահմանադրական կարգավիճակով, այլև աներկբա ամենաբարձր հանրային վարկանիշով, նախաձեռնել է ազգապահպան համալիր առաքելություն: Աղբյուրներ, ինչպես և սպասվում էր, չբավարարվեց Վատիկանում «Քրիստոնեությունը Աղբյուրներում» խալստառակ թեմայով գիտաժողով կազմակերպելով, դրան հաջորդեցին արդեն Բաքվում կայացած Ղազինների խորհրդի նիստում Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Շեյխ-ուլ-Իսլամ Ալլահշուբյուր Փաշազադեի գերդոգավորված կեղծիքները, ըստ որոնց՝ իբր Մայր Աթոռը հիմնադրվել է «աղբյուրներում տարածքում»:

Այս բարբառանքներն անպատասխան չեն մնում: Հատկապես առանցքային էր Շվեյցարիայում ս.թ. մայիսի 27-ին Վեհափառ Տիրոջ ելույթը շուրջ 400 բարձրաստիճան հոգևորականների առջև, որում խիստ փաստարկված բացահայտվեցին աղբյուրներում ողջ կեղծարարությունը և դրա հեռահար հայատյաց նկրտումները: Բնորոշ է այն, որ Մայր Աթոռի ջանքերով համաժողովը կրել է «Լեռնային Ղարաբաղի հայկական հոգևոր, մշակութային և պատմական ժառանգության պահպանությունը» խորագիրը:

Անշուշտ, Հայ Եկեղեցու այդպիսի կեցվածքը չէր կարող անտեսվել և չթիրախավորվել աղբյուրներում իշխանության և հոգևոր առաջնորդի կողմից, սակայն



խիստ տարակուսելի ու մտահոգիչ է, որ այդ ամենին զուգահեռ, ակներև արհեստական օրակարգ ձևավորելու նկրտումներով Հայ Եկեղեցին միաժամանակ թիրախավորվել է նաև Հայաստանի իշխանության կողմից: Ըստ էության, անհարկի համառությանը ու անընդունելի հռետորաբանությանը հնչում են օրինապաշտության, հավատքի ու դավանաբանության հետ առերևույթ լրջագույն աղերսներ ունեցող արտահայտություններ, որոնք թեպետ արտաքուստ միտված են Հայ Եկեղեցու նսեմացմանը, այնուամենայնիվ անխուսափելիորեն կհանգեցնեն պետական, քաղաքական և հասարակական ողջ համակարգի արժեզրկման:

Ցավով արձանագրում ենք, որ սոցցանցերում այդ անհավասարակշիռ, անպատասխանատու ու որևէ դրական արդյունք չակնկալող արտահայտությունները, ինչ-

պես և սպասվում էր, հանգեցրել են սոցիալ-քաղաքական անանխաղեյ լարվածության և հանրային երկպառակության մի նոր, է՛լ ավելի տհաճ ալիքի: Երկրի առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանն ուղղված ջանքերը մեկտեղելու, անդուլ աշխատանքի միջոցով լուծումներ առաջադրելու փոխարեն պարզապես աններելի են արհեստական օրակարգեր շրջանառության մեջ դնելու հնարքով եղած սուղ միջոցները փոշիացնելու և մարդկանց հավատքը, Հայ Եկեղեցու դավանաբանությունը աշխարհիկ կանոնակարգերին ենթարկեցնելու սին փորձերը, Մայր Հայրենիքում Հայ Եկեղեցու նկատմամբ Սահմանադրության հետ աղերսներ չունեցող մեթոդաբանությամբ պետական իշխանություն և պետական վերահսկողություն առաջադրելու նկրտումները, մեղմ ասած, դատապարտելի են:

Հարկ ենք համարում արձանագրել նաև, որ եկեղեցիները, վանքերը և սրբավայրերը՝ որպես պատմամշակութային հուշարժաններ, անտարակույս, ունեն հոգաժության կարիք, սակայն իրավիճակի առնչությամբ պահանջներ և զնահատականներ հնչեցնելուց առաջ անհրաժեշտ է ղեկավարվել օրենսդրության տարրական պահանջներով, և այնժամ պարզ կդառնա, որ պատմամշակութային հուշարժանների պահպանման և նորոգման պարտավորությունը վերապահված է կառավարությանը և պետք է իրագործվի պետական բյուջեի միջոցներով: Ստեղծված իրավիճակում այդ զգալի ծախսատար առաքելությունն ամբողջովին կամավոր ստանձնել է Հայ Եկեղեցին:

Խստորեն դատապարտելով հակաեկեղեցական վերջը նշված երևույթը և շեշտելով, որ այդպիսի նկրտումները միանշանակ աղետաբեր են՝ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ պետական իշխանությունը պետք է անհապաղ դադարեցնի Հայ Եկեղեցուն թիրախավորելու քայլերը: Ակնկալում ենք, որ հայ հանրությունը կդրսևորի ծայրահեղ ողջախոհություն և որպես իրավիճակից դուրս գալու խելամիտ միջոց՝ կլծվի ոչ թե ատելության խոսք տարածելուն, այլ Հայ Եկեղեցուն քաղաքակիրթ պահվածքով և ազգային արժանապատվությամբ սատարելուն:

«Հայոց Տուն» համահայկական միավորում



Էրդողանի հրավերով կայացած այցը վկայում է այն մասին, որ Թուրքիան շահագրգռված է, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացն առաջ գնա: Իսկ որ ոչ մի էական առաջընթաց չարձանագրվեց, դա էլ վկայում է այն մասին, որ Թուրքիան շարունակում է այն դիրքորոշումը պահպանել, որը բազմիցս արտահայտել է հենց Էրդողանը, այսինքն՝ մինչև Չայաատանի և Ադրբեյջանի միջև խաղաղության համաձայնագիր չստորագրվի, Թուրքիան քայլ չի անի Չայաատանի հետ հարաբերությունների կարգավորման առումով:

Թուրքիան իր դիրքորոշումը չի փոխել և չի էլ փոխի, չնայած դրան՝ երկու երկրները, որոնք խնդիրներ ունեն, արդեն սկսում են իրար հետ քննարկել դրանք, նշանակում է՝ որոշ առումով ընդհանուր մթնոլորտն ավելի բարենպաստ է հարաբերությունների կարգավորման առումով. հայ-թուրքական հարաբերությունները պետք է կարգավորվեն, ուղղակի Թուրքիան տասնյակ տարիների ընթացքում հրաժարվել է իր դիրքորոշումը փոխելուց, նախապայմաններ է առաջ քաշել և այլն: Պետք է ձգտել հարաբերությունները կարգավորել՝ չգնալով զիջումների

Ակադեմիկոս Ռուբեն Սաֆրասարյանի անդրադարձը հայ-թուրքական վերջին պարզացումներին

թուրքական ճնշումների ներքո, բայց մյուս կողմից էլ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ են այցեր, երկխոսություն, քննարկումներ:

Ինչ վերաբերում է վարչապետ Փաշինյանի այն հայտարարությանը, թե պատրաստվում է Թուրքիայի նախագահին հրավիրել հաջորդ տարի Երևանում կայանալիք Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին, այդտեղ ոչ մի արտառոց բան չկա, օրինաչափ երևույթ է, սակայն իմ կարծիքով Էրդողանը չի գա:

Նիկոլ Փաշինյանը մասնաշաղկապ է և, որ «խաղաղության խաչմերուկ» նախագիծը կարող է լինել «Միջին միջանցք»-ի մաս: Արդյոք «խաղաղության խաչմերուկ»-ն ընդունելի՞ կլինի Թուրքիայի կողմից: Դա պետք է թուրքական կողմը որոշի, կարծում եմ՝ հիմա նրանք պետք է ուսումնասիրեն, պետք է հասկանան, որ եթե ապագայում այնպիսի հնարավորություն ստեղծվի, որ մեր տարածաշրջանում բոլոր կոմունիկացիաները, մասնավորապես նրանք, որոնք անցնում են Չայաատանի տարածքով, բաց լինեն, բայց լինեն որպես Չայաատանի ինքնիշխան տարածք, դա կարծում եմ՝ ոչ միայն Թուրքիայի, այլև ամբողջ տարածաշրջանի համար օգուտ կլինի: Դրա մասին դեռ վաղ է խոսել, որովհետև տարածաշրջանը դեռ չի մտել այնպիսի փուլ, որ մանաթիպ ծրագրերը կարողանան կյանքի կոչվել:

Եթե մեր տարածաշրջանը սկսի հակամարտությունները հաղթահարելու փուլը, իսկ դա մեծապես կախված է մասնաշաղկապական համաձայնագրի ստորագրումից, ապա հնարավորություններն ավելի մեծ կլինեն: Այստեղ պետք է մասնաշաղկապում ու Ադրբեյջանը հասկա-

նան, որ իրենց համար ավելի ձեռնտու է ունենալ այսպիսի հնարավորություն, այլ ոչ թե ճնշել Չայաատանին ու հույս ունենալ, որ Չայաատանը կգնա զիջումների և կտրամադրի իրենց, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցք»-ը: Ես համոզված եմ, որ Չայաատանն այդ հարցում զիջումների չի գնա:

Չայ-թուրքական ներկայիս հարաբերությունները գնահատելու համար պետք է փաստորից ելնենք: Թուրքիան շարունակում է խոչընդոտել Չայաատանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ առաջ քաշելով հայ-ադրբեյջանական համաձայնագրի ստորագրման անհրաժեշտությունը: Սա Թուրքիայի՝ տասնամյակների ընթացքում որդեգրած նախապայմանների քաղաքականության մեր ձևակերպումն է: Երկրորդ. չնայած այս բոլոր խոչընդոտումներին՝ տեսնում ենք, որ կողմերը չեն հրաժարվում, չեն ասում, որ այլևս չեն գնալու կարգավորման ճանապարհով, այսինքն՝ կարգավորման գործընթացը կենդանի է՝ հակառակ բոլոր խոչընդոտումներին, որը հարուցում է Թուրքիան: Երրորդ եզրակացությունը. կարծում եմ, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, որը վաղ թե ուշ պետք է լինի, կհանգեցնի, որ մեր տարածաշրջանում այդ խաղաղության գործընթացներն ավելի առաջ գնան, և դա կնպաստի, որ Չարավային Կովկասը՝ որպես տարածաշրջան, կսկսի ավելի լայնածավալ ինտեգրվել համաշխարհային տարբեր համակարգերի մեջ, իսկ դա այն գործընթացն է, որը ձեռնտու է բոլոր մեծ տերություններին:

Zakerak.am, 23.06.2025

«Հույս չունենաք, թե կազատվեք գրքերից»

Ժամ-Կլոդ Կարիերի և Ումբերտո Էկոյի «Հույս չունենաք, թե կազատվեք գրքերից» («N'esperez pas vous débarrasser des livres», ֆր. քննադիրը) համահեղինակությամբ այս գիրքը, որ հրատարակվել է 2009-ին, երկխոսություն է երկու մեծ մտածողների՝ ֆրանսիացի սցենարիստ ու բիբլիոֆիլ Ժամ-Կլոդ Կարիերի և իտալացի սեմիոտիկ, գրականագետ և վիպասան Ումբերտո Էկոյի միջև (հայերեն հրատարակությունը՝ «Անտարես» հոլդինգի, թարգմանությունը՝ ֆրանսերենից՝ Սարգիս Դավթյանի, 2015 թ., Երևան):

Գրքի անցյալը, ներկան ու ապագան, նրա էությունը, անանց արժեքը, թվային դարաշրջանի ազդեցությունը ընթերցանության վրա, գրադարանների, հավաքածուների, մոռացված գրքերի դերը մշակույթում, գրքասիրության և գիտելիքի տարածման տարբեր ձևերը նրանց քննարկման թեմաներն են, որ հրապուրում են այս հրաշալի ստեղծագործության ընթերցողներին:

Վերնագիրը՝ «Հույս չունենաք, թե կազատվեք գրքերից», սարկաստիկ հեգնանք է՝ ուղղված նրանց, ովքեր ձգտում են կանխագուշակել գրքի վախճանը թվային հեղափոխության ֆոնին: Հեղինակները, ընդհակառակը, պնդում են, որ գիրքը՝ որպես տեխնոլոգիա, այնքան կատարելագործված է, որ ոչինչ չի կարողանա փոխարինել նրան:

Ներկայացնում ենք հատվածներ Ումբերտո Էկոյի և Ժամ-Կլոդ Կարիերի զրույցներից, որոնք վարել է ֆրանսիացի գրող, էսսեիստ և լրագրող Ժամ-Ֆիլիպ դը Տոնակը:

- Գիրքը, ինչպես անիվը, մուրճը, դանակը կամ զանազան պարզ գործիքներ, մի անգամ արդեն հորինվել է, և հնարավոր չէ այն շատ ավելի լավ դարձնել:
- Չկա ավելի տխուր բան, քան այն գիտելիքը, որը կորել է պարզապես այն պատճառով, որ այն ոչ ոք այլևս չի կարդում:

- Եվ երբեմն այդ մոռացված տողերի մեջ կարող է լինել ինչ-որ բան, որն ավելի կարևոր է, քան մեր ժամանակի աղմուկը:

- Մենք կորցրել ենք հազարավոր գրքեր գրադարանների հրդեհից, պատերազմներից, անտարբերությունից:

- Բայց միևնույն ժամանակ մենք շարունակում ենք կուտակել, մեր գրադարանները համարել ամեն օր լույս տեսնող հազարավոր գրքերով: Վստահվե՞ք ոչ միայն կորստի մեջ է, այլ նաև ավելցուկի: Ինչպե՞ս տարբերակել արժեքավորն աղմկահարույցից:

- Իմ գրադարանը ոչ թե իմ հիշողությունն է, այլ իմ մոռացության հիմնալի կազմակերպված քարտեզը:

- Այն ամենը, ինչ ունես, վկայում է քո հետաքրքրությունների մասին, իսկ այն, ինչ դեռ չես կարդացել՝ քո հնարավորությունների մասին:

- Մենք հիմա ապրում ենք մի դարում, երբ թվում է, թե թվայինը կփրկի ամեն ինչ:

- Բայց հիմա CD-ները շատ ավելի արագ են մոռացվում, քան միջնադարյան ձեռագրերը:

- Նրանք, ովքեր չեն կարդում, ապրում են միայն իրենց կյանքով: Կարդացողն ապրում է մասնաշաղկապով: Կարդալն անմահության ձև է՝ ժամանակավոր, բայց անժամանակ:

- Մեր թվային աշխարհը փխրում է: Մենք դեռ կարդում ենք իրենց ձեռագրերը, բայց ոչ մեկս չի կարող բացել 20 տարի առաջվա ֆլոպի սկավառակը:

- Իմ գրադարանում ամեն ինչ չեն կարդացել: Բայց հենց չկարդացած գրքերն են ստիպում իմ մտածել, որ ես դեռ պիտի սովորեմ:

- Գիրքն այնպիսի օբյեկտ է, որ երբ ընկնում է, չի փշրվում: Այն չի պահանջում էլեկտրաէներգիա, չի ջարդվում հարվածից, չի սպառվում: Փաստորեն գիրքը հարմար է երկարաժամկետ օգտագործման համար:

- Ոմանք ասում են՝ գիրքը հնացած է: Բայց եթե հնացած է, ուրեմն ինչո՞ւ է այն մեզ դիմակայում մերից ու մերից, հիմ լեզվով, բայց մեր իմաստով:

- Գիրքը երբեք չի հնանում, քանի որ իր բնույթով կատարյալ է՝ պարզ, մատչելի, ֆիզիկապես կայուն:

Նյութը պատրաստեց Վահան ԽԱՉԱՏՐՅԱՆԸ



Գիտնականներն օվկիանոսում «արտերկրային» հաղորդակցության ձև են հայտնաբերել

Գիտնականներն օվկիանոսում հաղորդակցության տարօրինակ ձև են հայտնաբերել, որը, ըստ նրանց, կարող է օգնել իրենց այլմոլորակային կյանք հայտնաբերելու տիեզերքում: Արտերկրային բանականության որոնում (SETI) ինստիտուտի հետազոտողները հայտնաբերել են, որ ջրից բարձրացող մեծ, պղպեղակների նմանփող օղակները ստեղծել են սապատավոր կետերը, որոնք հետազոտողների կարծիքով մասնաշաղկապում գտնվող մարդկանց:

Marine Mammal Science հանդեսում հրապարակված հետազոտությունը ցույց է տվել, որ օղակները ձևավորվում են երեք հիմնական իրավիճակներում՝ սնվելու, հանգստանալու և հետաքրքրասիրության համար, որն ամենատարածված նպատակն է: Արձանագրվել է ինը դեպք, երբ սապատավոր կետերը նավակների և լողորդների մոտ պղպեղակներ են փչել:

Այս դեպքերում սապատավոր կետերը բազմիցս մոտեցել են նավակներին և ջրի մեջ գտնվող մարդկանց՝ առանց ագրեսիայի որևէ նշանի, թափահարելով պղպեղ և ջուր ցայտելով: Հետազոտողները նշել են, որ դա հստակ նշան է այն բանի, որ սապատավորները հանգիստ էին և փորձում էին խաղալ վարք դրսևորել, ինչը շրջապատի մարդկանց հետ շփվելիս ստիպում էր նրանց հարմարավետ զգալ:

Մինչ այժմ պղպեղակավոր օղակները տեսանելի էին միայն այն ժամանակ, երբ սապատավորները որս էին հավաքում, իսկ արուններն իրենց հետևում պղպեղակավոր օղակների հետք էին թողնում՝ եզիմ գրավելու համար: Հետազոտողները կարծում են, որ հնարավոր է՝ կետերը տարիներ շարունակ փորձել են շփվել մարդկանց հետ, սակայն այս երևույթը մինչ օրս չի ուսումնասիրվել:

Գիտնականների թիմը կարծում է, որ այդ օղակները կարող են օգնել հետազոտողներին բարելավելու տիեզերքում այլմոլորակային բանականության որոնումները՝ բացելով ճանապարհ տիեզերքից ելող անսովոր ազդանշաններ հայտնաբերելու համար, որոնք, ինչպես սովորաբար մտածում ենք, մարդկանց համար նախատեսված չեն:

SETI ինստիտուտը ոչ առևտրային հետազոտական կազմակերպություն է, որը զբաղվում է այլմոլորակային բանականության որոնմամբ և տիեզերքում կյանքի ծագման ու բնույթի ուսումնասիրությամբ:

news.am, 13.06.2025 թ.

ՀԱՄԱՀԵԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԱՆԻ

Պարսկական

Ինչքան ուժեղ լինես, քեզինք ուժեղներ շատ կան:

Լավ ձին էլ է երբեմն սայթաքում:

Երկար լեզուն կկարճացնի կյանքը:

Հնդկական

Ձրի մեջ կոկորդիլոսի հետ մի՛ վիճիր:

Քո լեզուն առյուծ է. եթե նրան կապես, քեզ կպաշտպանի, եթե թողնես, քեզ կհոշոտի:

Ֆրանսիական

Խեղդվողը չի մայում, թե ինչ ջուր է խմում:

Եթե երիտասարդությունն իմանար... Եթե ծերությունը կարողանար...

Հունական

Ով դադարում է բարեկամ լինելուց, ուրեմն երբեք չի եղել:

Փակ բերանի մեջ ճանճ չի մտնում:

Շվեդական

Երիտասարդությունը գեղեցիկ դեմք ունի, ծերությունը՝ գեղեցիկ հոգի:

Ռուսական

Խոսքերը մեծ են թռչունների: Դրանք չեն կարող բռնել, երբ թռչում են:

«Բոլորս մեր մարքում օրհնել ենք նրա աշխարհ գալու օրը»

(ԱՎԵՏԻՔ ԻԱՆՇԱԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ ԱՎԱԴԵԱԻԿՈՍ ՌՈՒԲԵՆ ԶԱՐԿՆԻ ՀՈՒՇԵՐԻՅ)

* * *

Խնջույքի էինք: Նստած էի Վարպետի կողքին: Ինչ-որ կենաց առաջարկվեց, և մեկը «Ձախորդ օրերը» երգեց:

Ասաց.

-Գլուխգործոց է: Այստեղ Ջիվանին Սայաթ-Նովայի կողքին է: Ոգին ժողովրդական է, միտքը՝ առույգ, հայացքը՝ լայն:

Լռեց:

-Բանաստեղծություն կա, որի առաջին տողը մի ամբողջ ոտանավոր արժե: Սա էլ դրանցից է. մի խոր ու մեծ իմաստի խտացում: Հավիտենական կյանք ունի:

* * *

Մի առիթով Վարպետն ասաց.

- Շատ տարիներ առաջ էր: Այն ժամանակ Փարիզում էի: Փայլուն մրցանակ խոստացան նրան, ով մի բառով կարտահայտի ամենամիլիարդական հասկացությունը:

Մի պահ լուռ մնաց և ապա շարունակեց խոսքը.

- Շատերը մասնակցեցին. մեկն ասաց՝ սեր, մի ուրիշը՝ հայրենիք, երրորդը՝ կյանք, մեկն էլ թե՛ ազատություն, ուրիշները՝ կարոտ, ծգտում, հմայք և այսպես շարունակ: Եվ ի՞նչ եք կարծում, ո՞վ շահեց մրցանակը:

Նայեց շուրջը նստածներին: Ոչ ոք ծայն չհանեց:

- Շահեց նա, ով որ ամենամիլիարդական հասկացությունը հայտարարեց ծերությունը:


Բոլորս էլ անակնկալի եկանք: Վարպետը ժպտաց և ապա, հայացքը կենտրոնացնելով մեկի վրա, որը նայում էր իրեն տարակուսանքով, բացատրեց.

- Հայա, սիրելիս, այդպես է. ծերությունը իր մեջ ամփոփում է մնացած բոլոր հասկացությունները:

* * *

Երվանդ Քոչարի մոտ էինք: Մոսկվայից եկել էր թարգմանիչ Հակոբ Խաչատրյանը: Կանչել էին ինձ: Իսկ ես Նաիրի Զարյանի մոտ էի: Այնտեղ էր նաև Իսահակյանը: Առաջարկեցին միասին գնալ: Գնացինք: Հետո եկան և ուրիշները:

Խոսք բացվեց կնոջ մասին: Իսահակյանը հիշեց ժո-



ղովորդական մի ասացվածք.

- Եթե մի գործ ես ուզում բռնել, խորհուրդ արա հորդ հետ: Եթե կենդանի չէ, փափախդ դիր և նրա հետ միտք արա: Իսկ եթե փափախ էլ չունես, խորհուրդ արա կնոջդ հետ, բայց արա նրա ասածի ճիշտ հակառակը:

* * *

Վարպետը վախճանում էր մահից: Եվ չէր թաքցնում: Ամեն մի հասակակցի մահ ընդունում էր կրկնակի հարվածով: Արեղյանը մահացավ, և նա վշտացավ ոչ միայն ընկերոջ և մեծագույն հայագետի կորստով, այլև այն պատճառով, որ ընկերոջ մահվան փաստը վկայում էր և իր մահվան մերձավորությունը: Նույնը Մանանդյանի ժամանակ, ինչպես և Աճառյանի մահվան օրերին: Մի օր ասաց.

-Մոտենում է հերթս:

Ամենից շատ վրան ազդեց Դեմիրճյանի մահը: Դա նույն կակիծը չէր, ինչ որ մյուսների մահվան ժամանակ: Իսահակյանի և Դեմիրճյանի մտերմությունը հնուց էր գալիս. բայց վերջին մի քանի տարին այնքան մոտեմացան, ընտելացան իրար այն աստիճան, որ ցավ էին ապրում, երբ միմյանց չէին տեսնում կամ գոնե հեռա-

խոսով չէին խոսում իրար հետ: Դեմիրճյանը նրա համար և ինքը Դեմիրճյանի համար դարձավ այն մարդը, որից այլևս գաղտնիք չէր պահում:

Դեմիրճյանի մահը կոտրեց նրան. շարքից դուրս եկավ ոչ միայն սերնդակից մի մարդ ընդհանրապես, արժեքավոր մի անձ մեր մշակույթի համար, այլև այնքան մոտ ու հարազատ մի մարդ, որ լցնում էր նրա շրջապատը, և որի կորստով ամայացավ շուրջը...

* * *

Պատերազմը նոր էր սկսվել: Մի օր խոսք եղավ այն մասին, որ հայ բանաստեղծները շատ են անդրադարձել հայրենիքին: Գտանք և դրա պատմական հիմքերը: Ես ասացի, թե, ճիշտ է, շատ-շատ է գրվել, բայց բացարձակ արժեքները սակավաթիվ են, երևի մի քանի հատ: Ամսիջապես ուզեց իմանալ, թե որոնք են: Ասացի, որ չափաժողովորդականությունից չորս գործ միայն բացարձակ իմաստով լավ են:

-Խիստ չէ՞ս:

Հետաքրքրվեց, թե որոնք են:

Ես թվեցի՝ Թումանյանի «Հայոց լեռներում», Իսահակյանի «Ռավեննայում», Տերյանի «Տեսա երկիրն իմ հայրենի» և Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»:

Մտածեց: Սկսեց բանաստեղծություններ հիշել և ինքն էլ տեղնուտեղը առարկում էր, ասում, թե ինչի այս կամ այն գործը չի կարող այս չորսի շարքում դասվել: Ինձ դու դրանց շարքում դասեցիր համոզված, թե՞ ինձ չվշտացնելու համար:

... Ես տալիս եմ իմ հիմնավորումը. այդ բանաստեղծությունն արտահայտում է Հայրենիքի հավիտենական հասկացությունը և դրա համեմատ մարդու անցողիկ լինելը:

Ժպտաց: Նշանակում է՝ հավատաց: Մի փոքր հետո.

- Ես չգիտեմ, թե դու ինչ կարծիքի ես, բայց բոլորից լավը, իհարկե, Զարենցին է: Այդ մի հատիկ ոտանավորը բավական էր, որ նա անմահների շարքն անցներ: Այստեղ նա մրցում է ամենքի հետ, ոչ ոքից հետ չի մնում, երբեմն կանգնում է հավասար, երբեմն էլ գերազանցում է:

* Ռ. Զարյան, «Հուշապատում», գիրք առաջին, 1975 թ.



Ազդիսի քարանձավի մուտքը

Դարաբաղում մի շարք ուղղություններով հնագիտական հետազոտություններ են իրականացվելու, այդ թվում՝ «Խոջալուի բրոնզե դար», «Ազդի-Թաղլարի պալեոլիթյան հուշարձաններ», «Աղվանքի նյութական-մշակութային ժառանգության ուսումնասիրություն» և այլն: Այդ մասին է նշել Ադրբեջանի ԳԱՀ հնագիտության և մարդաբանության ինստիտուտի տնօրեն Ֆարիադ Գուլիևը: Ըստ նրա՝ շուտով «ազատագրված տարածքներում» սկսելու են աշխատել միջազգային հնագիտական արշավախմբեր:

Հնագիտական աշխատանքների այս ուղղությունների ընդգծումն Ադրբեջանի՝ պատմության վերաշարադրման ու նոր անցյալ ստեղծելու քաղաքականության արտացոլումն է, որի արմատները ծգվում են դեռևս խորհրդային շրջան՝ 1930-ական թվականներ: Հասկանալի է, որ «Աղվանքի նյութական-մշակութային ժառանգության ուսումնասիրությունը» ծառայելու է Արցախում հայկական մշակութային ժառանգությունն աղվանական-ուղիական ներկայացնելու և յուրացնելու քաղաքականությանը: Այսինքն՝ «գիտականորեն» ներկայացնել Արցախի ողջ քրիստոնեական ժառանգության աղվանական, հետևաբար՝ ադրբեջանական լինելը:

Ադրբեջանական «պատմագրությունը» երբեք չի բավարարվել Աղվանքի կամ Ատրապատականի հետ ժառանգական կապ հորինելով և փորձում է ավելի հեռուն գնալ՝ «յուրացնելով և ադրբեջանականացնելով» նաև նախամարդուն:

Արցախում գտնվող հնագիտական կարևորագույն նշանակություն ունեցող Ազդիսի քարանձավում 1960-1970-ական թվականներին կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել է նախամարդու ծնոտ: Ըստ ադրբեջանական պատմագրության որոշ ներկայացուցիչների՝ ծնոտը պատկանում է առաջին ադրբեջանցուն:

Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի Պատմության և ազգաբանության ինստիտուտի տնօրեն Քարին Շուբրուովի երևակայությամբ՝ «Ադրբեջանի բարենպաստ բնական ու աշխարհագրական միջավայրն այն դարձրել է աշ-

Նախամարդը հակահայկական քարոզչական գործիք Ադրբեջանի համար

խարհում առաջին մարդաբանական վայրերից մեկը: Վերջին ուսումնասիրությունների համաձայն՝ հոմո հաբիլիսը («հմուտ մարդ») այստեղ է հաստատվել 2-2,5 միլիոն տարի առաջ: Այսպես սկսվում է Ադրբեջանի պատմությունը:

2021 թվականի մարտին Իլհամ Ալիևն ընտանիքի հետ այցելել էր Ազդիսի քարանձավ, որի մուտքի մոտ հայտարարել էր. «Սա մարդու հնագույն բնակավայրերից մեկն է աշխարհում և պատկանում է Ադրբեջանի պատմությանը»: Այնուհետև նա «ապօրինի պեղումների» մեջ մեղադրել էր հայ և օտարերկրյա հնագետներին՝ հայտարարելով, որ «հայերը վնասել են մեր պատմական ժառանգությունը» և այսուհետ «միայն ադրբեջանցի գիտնականներն ու նրանց հրավիրած օտարերկրյա գործընկերներն ուսումնասիրություն կանեն այստեղ»:

Ի հակադրություն ադրբեջանական պատմագրության կեղծ մտավարձանքների՝ 2023 թվականի սեպտեմբերին «Central Asian Survey» հեղինակավոր գիտական ամսագրում լույս է տեսել Պոտսդամի և Հայդելբերգի (Գերմանիա) համալսարանների հետազոտող Ուրի Ռոզենբերգի «Նախամարդն ադրբեջանցի ազգայնական էր. նախապատմության մոբիլիզացիան և ազգաշինությունն Ադրբեջանում» վերնագրով հոդվածը:

Բաքվից ոչ հեռու գտնվող Գոբուստանի թանգարանում իրականացրած դաշտային աշխատանքների արդյունքում գրված հոդվածի սկզբում Ռոզենբերգը նշում է, որ «...ազգակերտման բազմաթիվ նախազգծեր գնում են դեպի պատմության խորքը, վերականգնում այն, հավակնություններ կայացնում հնագույն քաղաքակրթությունների նկատմամբ, անգամ չեղած պատմություններ հորինում, բայց Գոբուստանի թանգարանն ու դրա հետ կապված պատմությունը խելամոռության ցանկացած սահմանից դուրս են»:

Գոբուստանի թանգարանի մոտ գտնվող հնավայրում հայտնաբերվել են ավելի քան 17 հազար տարվա հնուրյան քարանձավային ժայռապատկերներ ու փորագրություններ: Հեղինակին զարմացրել է այն, թե ինչու են 17 հազար տարի առաջ քարանձավում փորագրություն արած մարդուն Ադրբեջանում ադրբեջանցի համարում: Հոդվածի սկզբում գիտնականը ներկայացնում է, որ ադրբեջանցիների համար պատմության ստեղծումն սկսվել է դեռ խորհրդային շրջանից, և խնդիր դիտարկում է ազգակերտման երևույթի շրջանակում: Ըստ Ռոզենբերգի՝ Ադրբեջանում գոբուստանցի քարանձավաբանական ադրբեջանցի են համարում՝ պայմանավորված դարաբաղյան հակամարտությամբ և հայերից ավելի հին ազգ ներկայանալու ծգտումով:

«Ադրբեջանցիներն օգտագործում են Գոբուստանի հնագիտական գտածոները՝ ապացուցելու իրենց բնիկութ-

յունը տարածաշրջանում և պնդելու, որ տարածքի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի բնիկներն են, և որ հայերը շատ ավելի ուշ են եկել այդտեղ», - նշում է հոդվածագիրը: Հեղինակն ընդգծում է, որ քաղաքական նպատակներով հնագիտությունը կարող է օգտագործվել՝ ոչ միայն խմբի ինքնությունն ուժեղացնելու համար, այլև անգամ ցեղասպանության, եթե կա գտնումների ու այլ վայրագությունների արդարացման պատճառ դառնալ:

Ռոզենբերգը նշում է, որ Գոբուստանի թանգարանի աշխատակիցների, այցելուների կարծիքով այդ տարածքում ապրած նախամարդիկ ադրբեջանցիների նախահայրերն են եղել, իսկ ոմանք անգամ նախամարդկանց ադրբեջանցի են անվանում: Այս պնդումը տարածված է նաև ադրբեջանցի հետազոտողների ու պատմաբանների շրջանում: Վերջիններս չեն կաշկանդվում նշել, որ նախամարդն ադրբեջանցի է: Ռոզենբերգը գրում է, որ, ըստ ադրբեջանցիների, եթե նախամարդու մնացորդը հայտնաբերվել է Ադրբեջանի տարածքում, դա արդեն բավարար ապացույց է՝ նրան ադրբեջանցիների հետ կապելու համար:

Հետազոտողը գտնում է, որ Գոբուստանի թանգարանը ծառայում է քաղաքական նպատակի՝ ապացուցելու, որ ոչ թե հայերը, այլ ադրբեջանցիներն են տարածքի առաջին բնիկները:

Այսպիսով, Արցախի Հանրության շրջանի Ազդիս և Մեծ Թաղեր գյուղերի տարածքում գտնվող քարանձավային համալիրները քարոզչական կարևոր դեր են խաղում Ադրբեջանում:

Վերջին տարիներին Ադրբեջանի կառավարությունը կանոնավոր տուրեր է կազմակերպում արտասահմանցի ճանապարհորդների, զբոսաշրջիկների, լրագրողների և այլ անձանց համար՝ կանգառի կետերից մեկն ընտրելով Ազդիսի քարանձավը: Այդտեղ նրանց պատմում են «Ադրբեջանի տարածքում հնագույն մարդու բնակության» և «հայերի կողմից անօրինական պեղումների» մասին:

Եթե ադրբեջանցի «հնագետ» Ֆարիադ Գուլիևն ասում է, որ իբր «հնագիտական հուշարձանների քարտեզն ապացուցում է, թե Ադրբեջանի հարուստ պատմությունն ու մշակույթը հասնում են Քարի դար», ապա չենք զարմանա, որ մի օր ադրբեջանցի «մասնագետները» հայտարարեն՝ նախամարդիկ խոսել են ադրբեջաներեն և քարանձավների պատերին փորագրել Ալիևներին գովերգող տեսարաններ:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ
23.05.2025

Լեո Կամսարի անսխալ էջերից



Ոչխարային բնագրն իզուր է միայն ոչ-խարներին վերագրվում: Այդ բնագրից մարդն ու այլ կենդանիներ ավելի լայնորեն ու անսահմանափակ են օգտվում, քան խեղճ ոչխարները: Ոչխարներին անպատվում են այդ բնագրի համար, մարդիկ և մյուս կենդանիներն օգտվում են: Ճանապարհ գնալիս ձին մի ուրիշ ձի է փնտրում՝ հետևից գնալու համար, էշն

առաջնորդ էլ է փնտրում: Շարքերով ճամփորդող սայլապանները ողջ ճանապարհին կռիվ են «տալիս» իրար հետ. մեկն ասում է՝ քո սայլն առաջ քշիր, ես քեզ հետևեմ, մյուսն ասում է՝ եզներս դարել են, դո՛ւ առաջ քշիր: Մարդը մանավանդ մեծ ձներից հետո տանից դուրս գալիս միշտ մի առաջնորդ է փնտրում՝ նրա ոտնատեղից օգտվելու համար: Թշվառության ճանապարհին միշտ իրենից ավելի թշվառին է որոնում՝ սրտապնդվելու և ապրելու համար. մահանալիս էլ, մինչև չերևակայի իր մեռած ընկերներին, չի ուզում աչքը փակել:

Հիշեցե՛ք ուղտերի քարավանը, որ առանց առաջնորդի քայլ չի փոխում, հիշեցե՛ք կռուկներին, երբ տաք երկրներ են չլուծ: Վերջերս վայրի բադերն ու սագերն էլ առաջնորդով են ման գալիս:

Առաջնորդ լինելը դժվար, պատասխանատու բան է, որից բոլոր կենդանիները փախչում են: Ես միայն մեզ մոտ են տեսել մի գույզ առաջնորդների, որոնք իրենց պարտականությունները սիրով են կատարում: Մի բան, որ, սակայն, կասկած է ծնում իր հետևորդների մեջ: Նման առաջնորդներն առհասարակ ժողովրդին դեպի կործանում են տանում...

Լեո Կամսար

Վիլյամ Մարդյան. «Հայր և հայր»

...Կուզենայի աշխարհիս երեսին տեսնել այն ուժը, որ խաթարել կարողանար այս ցեղը, կողակ ու հպարտ մարդկանց այս ցեղը, որի պատմությունը պատմված, բոլոր կռիվները մղված ու տանուլ են տրված, որի շինությունները խորտակված, գրքերը չընթերցված ու երգերը լռած են:

Փորձեք կործանել այս ցեղը, ասացե՛ք դարձյալ 1915 է, ու աշխարհի աչքը՝ պատերազմի ծխով բռնված: Կործանեցեք Հայաստանը, տեսե՛ք կկարողանա՞ք: Իրենց տներից քշեք անապատ. մի՛ մոռացեք ձեռքներից խել ճամփի հացն ու ջրի վերջին ունայը, կրակի տվեք իրենց ու իրենց Աստծու տները: Տեսե՛ք՝ նրանք դարձյալ պիտի չապրե՞ն: Տեսե՛ք՝ ցեղը դարձյալ պիտի չհառնի՞, երբ նրանցից երկուսը քսան տարի հետո համդիպեն ու ծիծաղեն իրենց լեզվով:

Ձանացեք, տեսե՛ք կարողանա՞ք պիտի, շունչանորդիներ, նրանց արգելել, որ չծաղրեն ձեր մեծ-մեծ գաղափարները, երբ աշխարհում երկու հայ խոսեն իրար հետ, փորձեք ջնջել նրանց:

1935 թ.



Օսմաբյուրյան (Գերմանիա) համալսարանի կենդանաբան Ալեսանդրա Մասկարոն շատ ժամանակ է անցկացնում Գաբոնում՝ հետևելով բնական պայմաններում կապիկների կյանքին: Կենդանիներն այնպես էին սովորել նրա ներկայությանը, որ նրա վրա համարյա ուշադրություն չէին դարձնում: Մի անգամ նա ապշել էր մի անսովոր դեպքից: Էգ շինպանգեն ճարպիկ շարժումով բռնեց օդում թռչող ճանճին և դրեց իր տղայի վերքի վրա: Ա. Մասկարոն ենթադրեց, որ աֆրիկյան ճանճերի որոշ տեսակներ (իսկ այս մայր ցամաքի միջատներն ամբողջությամբ ուսումնասիրված չեն) կարող են պարունակել ինչ-որ միացություններ, որոնք թուլացնում են ցավը և բորբոքումը:

«Կենդանական բժշկության» ուսումնասիրությունները կուտակվում են մի քանի տասնամյակ: Կենդանաբան Միքայել Հուֆմանը, որն աշխատում է Կիոտոյի (Ճապոնիա) համալսարանում, 1990-ական թվականներին հրապարակել է շինպանգենների ինքնաբուժման մասին մի քանի հետազոտություն: Տանգանիայի արևմուտքում Մահալե ազգային այգու կապիկները, որոնք տառապում են բարձր ջերմությամբ ուղեկցվող ստամոքսի խանգարումից, որոնում են որոշակի թփեր և ծամում են դրանց փոքր ճյուղերը կամ ամբողջությամբ կուլ են տալիս տերևները: Մի քանի ժամ անց ստամոքսը հանգստանում է, մարմնի ջերմաստիճանը՝ կանոնավորվում: Հուֆմանի հավաքած տերևների և ծաղիկների մուշկներն օգնեցին բուսաբաններին որոշելու բուժաբույսի անվանումը. դա Vernonia amygdalina-ն է՝ թփեր բարդածաղկավորների ընտանիքից, 2-ից մինչև 5 մ բարձրությամբ: Տեղաբնակները նույնպես այդ թուփն օգտագործում են բժշկական նպատակներով, և դժվար է ասել, թե ով

Դեղաբանությունը ջունգլիներում

Է ունից սովորել: Ամենայն հավանականությամբ, մարդիկ՝ կապիկներից: Վերջերս հաստատվել է, որ Vernonia-ն պարունակում է շատ ստերոիդային գլիկոզիդներ: Այս բույսի մեջ գտնվել են նաև ինչ-որ նյութեր, որոնք օգնում են շաքարախտի ժամանակ:



Որոշ կենդանիների մոտ տարածված է առողջարար բույսերի նաև արտաքին կիրառումը: Անգլիացի կենդանաբանները հետևել են, թե ինչպես են Բոռնեոյում օրանգուտանները ծամում վիշապածառի տերևները մինչև շիլա դառնալու աստիճան, որով հետո շփում են ոտքերի հողերը: Լաբորատոր հետազոտություններով պարզվել է, որ վիշապածառի տերևների ակտիվ միացություններն արգելափակում են հողերի բորբոքումը: Էգ օրանգուտանների համար դա շատ կարևոր է, քանի որ նրանք ստիպված են երկար ժամանակ իրենց վրա կրել ծագերին, որոնք դեռևս ինքնուրույն տեղաշարժվել չեն կարող, իսկ դա մեծ բեռ է հողերի համար: Ավելի ուշ պարզվել է, որ տարբեր ցեղերի տեղաբնակներ այդ նույն միջոցով բուժում են հողերի բորբոքումը: Դարձյալ պարզ չէ, թե ով է եղել առաջին բացահայտողը՝ մա՞րդը, թե՞ կապիկը:

*«Գիտության աշխարհում», N 1, 2025 թ.

ՈՒՇԱԳՐԱՎ ՄՏՔԵՐ

Եթե դրան ունես, մարդիկ քեզ կճանաչեն, եթե դրան չունես, դու մարդկանց կճանաչես:

ՊԼՍՈՆ

Դավաճաններին ատում են անգամ նրանք, ում որ ծառայություն են մատուցել:

Իշխանության ծարավը բոլոր կրքերից ամենահրեշավորն է:

ՏԱԿԻՏՈՆ

Եթե ժողովրդիցս խլեն երջանկությունն ու արժանապատվությունը, թող դատապարտվեն կործանման:

ԴԱՐԵՅ ՄԵԾ

Քաղաքականությունը միջոց է, որով անբարոյական մարդիկ իշխում են հիշողություն չունեցող մարդկանց վրա:

ՎՈԼՏԵՐ

Մարդուն հատուկ է վատաբանել այն, ինչին ինքն անընդունակ է:

Ոչ ոք չի կարող դատել ուրիշներին, քանի դեռ չի սովորել դատել իրեն:

ԳՅՈՒԵ

Ինչքան էլ լավ խոսես, եթե չափից շատ ես խոսում, վերջում հիմարություններ ես ասելու:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՅՈՒՄՍ

Ազնվությունը և հավատարմությունը թանկարժեք նվերներ են, որոնք չի կարելի ակնկալել էժանազին մարդկանցից:

ԲԵՆՍԱՐԴ ՇՈՌԻ

Մարդը, ով խիղճ ունի, տառապում է՝ ընդունելով սեփական մեղքը, և դա է նրա պատիժը:

ՖԵՐԴԻՆԱՆ ԴՈՍՏՈՎՍԿԻ

Քաղաքական գործիչը միայն մտածում է հաջորդ ընտրությունների մասին, իսկ պետական գործիչը՝ հաջորդ սերնդի մասին:

ՄԱՐԿ ՏՎԵՆ

Ովքեր չեն սովորում պատմությունից, դատապարտված են այն կրկնել:

ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑՇԵ

ՀԱՅՏԱԳՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ կենտրոնի Դեղաբանության և պատոհիստոլոգիայի լաբորատորիայի վարիչի և Պոլիմերային դիսպերսիաների խմբի ղեկավարի թափուր տեղերի համար

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 30 հունվարի 2025 թվականի N 102-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան (կամ մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում՝ խմբի ղեկավարի դեպքում)։

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ (խմբի ղեկավարի դեպքում չի պահանջվում)։

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) համահեղինակել է բնական գիտությունների մասնագիտություններով առնվազն վեց հրապարակում ՄԳՇ-ում (խմբի ղեկավարի դեպքում՝ չորս հրապարակում)։

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հոդվածներից առնվազն չորսուն հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ (խմբի ղեկավարի դեպքում չի պահանջվում)։

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին, բ) ինքնակենսագրություն,

գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լրացված,

դ) լուսանկար (2 հատ),

ե) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,

զ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

է) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերի պատճենները,

ը) հրատարակված գիտական աշխատանքների ցանկը, թ) բնութագիր վերջին աշխատավայրից,

ժ) տեղեկանք մշտական բնակության վայրից:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Ազատության 26, ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն (գիտական քարտուղարին), հեռ. +374 10-28-52-91:

ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4,
հեռ. 58-18-23, 3-16

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 30.06.2025 թ.:
Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: